

17126

17127

17128

17129

3-17-1900 Utopia in Ca

4-17-1900

Utopia in Ca

891.99

U-34

4-17-1900

1882



20 03



ՏԻԳՐԱՆ Ս. ՍԵԹԵԱՆ


891.99

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ե Ի

Ա. Շ Ո Ւ Ն

Տ Ա Ղ Ե Ր



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1884



3746



Ո՛վ իմ ողբացեալ ծնողքս

Ս Ե Ն Ե Ք Ա Ր Ի Մ Ե Ի Ն Ե Ք Տ Ա Ռ Ի Ն Է  
Տաղերս կը նուիրեմ յիշատակին ձեր է.

Ս Ա Հ Ա Կ

Թոռնիկին ձեր՝ զոր չ'տեսիք դուք  
է. որ երկու գարուն տեսաւ միայն  
Ու բռան գրկես հրեշտակիկ .....

ՏԻԳՐԱՆ Ս. ՍԵՓԵԱՆ

10127-57



# Գ Ա Ր Ո Ի Ն

Ե Ի

## Ա Շ Ո Խ Ն



### Տ Ա Ղ Ե Ր



### Վ Ա Հ Ր Ա Մ

Ողջոյն քեզ՝ ո՛վ դաճակութեանց մեր ոգի ,  
Ընդ որ մեր Քնարն որբացեալ արդ մորմոքի .....  
Զի դու լուս կաս , և մեր թեւերն ոչ ցնցես  
Յետ Քերթողին՝ որոյ շիրմէն սփռէիր  
Ընդհանուրս իւր շողն ու աւիւն լուսալիր .....  
Եւ արդ թողուս զմեզ անձկայրեաց ..... ողջոյն քեզ :  
Երբ կալիսոյց դուստր անողբ Սիրենայն  
Կը ներշնչէր յիս իւր երգեր սիրաձայն ,  
Ես առ ախամբ հասած շիրմին մայրենի՝  
Տրտում տաղերս ամէի քեզ գրաւական  
Իմ հէզ սրտին այն աղէխարչ թաղծութեան ,  
Եւ դու վիրացս հայթայթէիր սպեղանի .....  
Վե՛հ՝ խանդաղա՛տ հողիդ՝ ի լուր իմ երգոց՝  
Որ անդրանիկն էին հողւոյս կնանդոց ,



Ի կոկիտոնն իմ արտասուեաց կը թափէր  
 Փռւնջ մը ծաղկանց ..... պըսակն՝ անշուք իմ քնարին  
 Որոյ թեւերն այն օր զըւարթ թըթուացին՝  
 Ընդունելով ի քէն աւիւն ու թեւեր ։  
 Իսկ դու լուս կաս ..... և թեւասքօղ կը սըգայ  
 Քո բարձրաթուիչ հանճարդ՝ ի մէջ տարակայ ։  
 Յերբ վշտագնիս մէնիկ , և մեզ ո՛չ ծորես  
 Հոգեպարար ձայնիդ հոսանքն անըսպառ .....  
 Որոց անձկաւ՝ ոլորելով զայս բարբառ  
 Քեզ կը յղեմ , և կ'արտասուեմ ..... ողջոյն քեզ .....

1884

### Գ Ա Ր Ո Ւ Ն

#### Ք Ն Ա Ր Ն Ի Մ

Ի նուէր գարնան  
 Լարեալ էի՝  
 Ի ծնանել զձայն  
 Զոր երկնէի .  
 Վառ իղձ  
 Մատանց՝  
 Թեւից  
 Գայ յայց .

Ըսպասարկուք ծննդեան գործեն ,  
 Յաղեաց սրտի լարրս խըլեն ,  
 Մնանիմ ժայթքեմ որտաընդոստ  
 Իոց հրածորան՝ զաւի՛ւն ըմբոստ .  
 Ըզլարս աղեղ գգուէ ,  
 Եւ լարն իմ զիղձ հնչէ .

Վառէ զիմ խանդ իղձն այն՝  
 Լինիմ անբաղդ գուսան .  
 Իմ գեղգեղանք հնչեն ախուր՝  
 Հառնչք սրտին իմ բոց և հուր .....  
 Ժպտէր զուարթուն մ'ի լուր ձայնիս ,  
 Եւ ականջէր նըւագողիս ։

1888

#### Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Ի Կ

Պուրակ մի  
 Գնայի ես ,  
 Ամայի  
 Սրտիս ուէս .  
 Գարուն էր  
 Գեռափթիթ ,  
 Զերդ խոկեր  
 Խիտ առ խիտ  
 Մըլէր ծիւ  
 Սաղարթուց .  
 Հոն թառիլ՝  
 Հողւոյս ծոց  
 Եւ երգել  
 Միայնիկ ,  
 Հողւոյ թեւ  
 Բուլբուլիկ ,  
 Բարեաւ ինձ  
 Եկիր դու ,  
 Զքեզ՝ սրտից  
 Խնկարկու



Զեփիւռիկ  
Փայփայէ ,  
Քու ճայնիկ  
Զիս հմայէ.....

1868

ԳԹՈՏ ԿՈՒՍԻԿՆ

Յողն ի ծաղիկ	Ինչպէս նէրա
Ունի՞ այն տիպ՝	Շունչն ի բերան :
Ինչպէս նէրա	Մարգրիտն ի լանջ
Արցունքն ի բիր :	Ունի՞ այն հիւս՝
Աստղն ի յեթեր	Ինչպէս նէրա
Ունի՞ այն շուք՝	Շարքն ի չրթուես :
Ինչպէս նէրա	Շուշանն ունի՞
Աչքն ընդ յօնիւք :	Այնքան հրապոյր՝
Շողն ի լուսին	Ինչպէս նէրա
Ունի՞ այն զարդ՝	Մազեր գանգուր :
Ինչպէս նէրա	Ունի՞ երկին
Փայլն ի ճակատ :	Վսեմ մէկ լոյս
Բուրումն ի վարդ	Քան ըղնէրա
Է՞ քաղցր այնքան՝	Գուլթն ի յաչկունս....

1868

ՆՈՒԱԳ ԵՒ ՍԻՐՏ

Որփեայ քաղցրիկ լարերով  
Հիւսած ցաւոց չղթաներ՝  
Նուազը սրտիս կը բերէր  
«Այս քո բաժինդ» ըսելով :  
Բնութեան էի ըղձավառ ,  
Նուազն էր ախորժ իմ սրտին ,  
Քնարաց ճայնք ինձ քաղցր էին ,  
Այլ ինձ և հոն այրիլ կար :  
Բան մ'հոն վառէր զիս կրակով ,  
Սիրտս այն պահուն չղթայէր՝  
«Քեզ արժան են լոկ ցաւեր ,  
«Անո՞ք ես դու» գոչելով :  
Զէին լւէր գուսաններ ,  
Հնչէր ճայնը նըւազին ,  
Աւիւն կրակոտ՝ իմ սրտին  
Արիւն ու բոց կը ժայթքէր .....

1868

ՏԱՌԱՊԵԼՈՑ ՄԸ ԳԻՇԵՐՆ

Խաւարամած էր գիշեր՝ տխրատեսիլ՝ սեւազգեաց ,  
Իշխան երկրիս՝ անբարբառ յաղթանակէր լուլթիւն ,  
Ո՛չ բռնութեան ընդ դրօշիւք կանգնէր նորին յաղթանակ :  
Ո՛չ շեփորից՝ ո՛չ սուսերց՝ բոմբիւնք՝ շաչիւնք թնդային :  
Ի գութ երկրիս գերեւոյ ընդ երկաթեալ խաւարին՝  
Շարժեալ , ճօճեալ զսուրն յաղթող՝ անտես՝ անլուր՝ ահարկու ,  
Ընդ դրօշակօքըն լուսոյ՝ ազատութեան հէք երկրիս ,  
Վեհ լուլթեան գերեալ էր մըթածաւալ ըզգիշեր :  
Քանզի բնութեան լոյսն և չող վանեալ ի բիրտ խաւարէն ,  
Երկիրն ի մթան խարխափեալ , և իւրքն ընդ իւր մթապատ ,



Մինչդեռ ի քուն լինէին՝ վաստակաբեկ և անդորր ,  
 Մայրազորով լուսթիւն զհամայնսն անձայն օրօրէր :  
 Այլ այդ օրօր ո՛չ և զիս առնէր ի քուն խաղաղիկ ,  
 Ինձ ո՛չ հանգիստ ո՛չ բաժին գոյր լուսթեան ի գըթոյն ,  
 Ո՞ զիս արար թափառիկ և զիրկ ի քնոյ հանդստեան ,  
 Ո՞ զիմ ոգիս ած յազել Հեփեստեայ հո՛ւր տաճարին :

\* \*

Ոչ գոն յերկնից սեաւ կամար լուսին՝ աստղունք փայլիլուն ,  
 Ո՛չ ել լուսին ո՛չ եմուտ՝ լապտերն ոգւոց սիրատարի ,  
 Ընդ աղօտ թուին ի կամարն աստղունք շիջեալք մէտ ի մէտ  
 Եւ առկայծեալ որպէս ջահ՝ բբաց այդ տիպք նըւաղին .  
 Ո՛հ , նըւաղին և ընդէր , արդեօք Աստղիկ վարդածղի  
 Նեղէր և զայնս հրատոչոր , փորձէր և զայնս յիւր ի բովս ,  
 Կամ լուսահոս իւր բբացն ե՞ն դոքա հոյլ հոյլ ցոլմունք  
 Ոյք վեհ աչացն ի քթթեւ՝ շիջեալք՝ անդէն գան ի տես :  
 Արդեօք լուսին սիրապանծ տարամերժէր ի ծոցոյն  
 Ձթազակիրն իւր զլուսթիւն՝ զի սա ընդ երկիր գորովէր ,  
 Կամ լուսթիւն նախանձոտ՝ ըզթազուհւոյն գեղ ծածկէ՞ր  
 Երբ նա մթապատ ի յերկրի լինէր լապտեր սիրավառ :  
 Իսկ բնձ եւեթ դիպեցաւ՝ տխուր տեսիլը սիրոյ ,  
 Եւ ինձ հիգոյս էր արժան՝ զայդ տիպ խոյս տեսանել ,  
 Ո՛հ , իմ սրտին շէր այլուր խնդրեալ զգաղար սիրային ,  
 Ընդէ՞ր ապա տիրոջն իւր անգթացաւ տարածամ .....  
 \* \*

Վահ եղկեւոյս , աղիքն իմ ո՛հ գալարին տարադէպ .  
 Ահա ձայնէ հաւն՝ անժամ , այլ մի ահա ճըչէ նոր ,  
 Այլք եւս ահա սլարք հաւուց արձակեն զձայն այգախօս .  
 Զարթեա՞ն սոքա , ո՛ բնութիւն , այլ դու դեռ կաս ի թմբիր :  
 Այլ ո՛հ , ընդէ՞ր լեցին , յանձնըս արդեօք հրճուալիր՝  
 Թէ ի տեսեան ահաւոր՝ ընդոստ եղեն ի քընոյ .

Ահա նորոգ բառնան ճիչ , իսկ ո՛չ դեռ եւս այդանայ ,  
 Դեռ ո՛չ բնութիւն և երկիր զարթեան ի լոյս՝ յարչալոյս :  
 Եւ զի՞ եղեւ հաւուցդ այդ , են զիչերո՞յ արբանեակք ,  
 Որք լուսթեան զիմակալ բառնան զաղմուկս առ ի վրէժ ,  
 Կամ հաշտարմբք են դոքա ընդ մէջ լուսոյ՝ խաւարի ,  
 Որ աղերսեն ժիր ըզցայդ տեղի այգոյն տալ անգրէն :  
 Ո՛հ , նոյնդունակ է ոգւոցս անլոյս խաւար տրտմազին ,  
 Լոյսն անձկացեալ հեռակայ ի նոցանէ կայ մէնիկ ,  
 Ոգւոցս ի մուայլ վառի հուր , այլ հուրն ըզձից ո՛չ է լոյս ,  
 Ո՞ արդ և զիմ խնդրեսցէ անլոյս ոգւոց շնորհեւ զայդ :

\* \*

Որ գիչերիդ զայդ տիպար բերես ի քեզ համանման ,  
 Սիրտ , զոր հուր քո կաշկանդէ՝ իղձն անտոք և մըթին ,  
 Վահ , զի՛ չուստ ես , ո՛չ ունիս ըզլուսթիւն գիչերոյ ,  
 Որոտընդոստ ի մերիկ ծփաս՝ կոծիս շանթալից .  
 Լուսին՝ աստղունք՝ ո՛ւր են քեզ՝ գէթ երազոց խօսակիցք ,  
 Քեզ Արտեմիս ոչ շնորհէ անձկութեանց քոց լինիլ ջահ ,  
 Եղրեկ քեզ , սիրտ , չէ քո իսկ լուսնոյ հանգոյն սէր նաեհ ,  
 Ձի ընդ լուսթեան հեշտ կեայ նա , քեզ տխուր կեանք տարակայ .  
 Քան ըզգիչեր դու հէք ես , քան ըզբնութիւն ողբազին ,  
 Սիրտ հըրավառ , ոչ գտաւ քեզ որ լուսոյդ ի խնդիր .....  
 Վաղիւ ծագէ այդ լուսոյ , բնութիւն ի լոյս զարթնու հեշտ ,  
 Այլ քեզ վաղիւ չի՞ք ինչ այդ , գիչեր յաւէ՛տ քեզ բաժին :  
 Հայեանց ապա ընդ այս տեսիլ , սիրտ իմ դիւթեալ և հրակէզ ,  
 Տես զինչ առնէ քեզ այսօր աղեղնայօճն այն կուսան ,  
 Յաւէրժահարսն սպառում և սպասարկուն Աստղկան  
 Վաղ քա՛ջ արդեօք ըզքեզ զո՛հ զրկեալ ժպտին յազեսցէ .....  
 1869



Ն Ա Մ Է Ք Ի Ն

Փայլէր լուսնակն ի յեթեր,  
 Յանեալ զըյս վարսն համասփիւռ ,  
 Քառադաճին փայլիլէր  
 Մոցն արծաթի ցորմամբ բիւր :  
 Եւ Պատէմիլքն այն զըւարթ  
 Շողար հանդէպ մեր աչաց ,  
 Իբր հսկայ ջահ լուսահրատ  
 Թռուցեալ յանկարծ վերասլաց :  
 Ի պարտիզին զովագին  
 Կայր կուսանաց զըւարթ պար ,  
 Մրմունջք խնդից անդ էին ,  
 Եւ զարթնուչին իղծք իմ վառ :  
 Իսկ ես կայի անդ լուռ՝ հէք ,  
 Բարբառ սրտիս որոտայր .....  
 Կուսանք ձայնեն ինձ զի զերզ  
 Երգեցից ես զուարթարար :  
 Երգե՛լ խնդրեն , ես հիւժի՛մ ,  
 Անդէտ երգոցս են ողբոց ,  
 Կամին լեւ զաւաչն իմ  
 Որ հառաչն է իմ ողւոց :  
 Ասեն՝ երգեա՛՛ օ՛ն ընդ մեզ ,  
 Եւ գեղգեղեն գՆամէքին ,  
 Սիրտ իմ կարծէ՛՛ հըրակէ՛՛զ՝  
 Լըսել ըզձայնս երկնային :  
 Ա՛հ , Նամէքին մինչ լուէր ,  
 Խաւարեցա՛ւ ինձ լուսին ,  
 Իսկ կուսանաց դէմք ժպտէր՝  
 Եւ առ լուսնակն յառէին .....

1870

ԾԱՂԻԿ ՀՈՌԻՈՅ ՄՊՂՁՆ

Ըլայի մի թռչուն ,  
 Եւ երբ ի պատուհան  
 Նստէիր դու միայն՝  
 Թառէի՛ քո ուսոյն :  
 Ըլայի ես մի վարդ ,  
 Եւ երբ դու իջնէիր  
 Քո պարտէզ ծաղկալիր ,  
 Քաղէի՛ր զիս ի զարդ :  
 Ըլայի սիւքն այգուն ,  
 Եւ երբ դու նորագարթ  
 Ելնէիր սիրազուարթ ,  
 Գգուէի հերքդ համբուն :  
 Ըլայի սոխակն ես ,  
 Եւ երբ դու ի գարնան  
 Խնդրէիր անոր ձայն ,  
 Խօսէի՛ ես ընդ քեզ .....  
 Ըլայի ես առուն ,  
 Եւ երբ յիս նայէիր ,  
 Զքեզ իմ մէջ տեսնէի՛ր ,  
 Երգէի՛ կարկաչուն .....  
 Ըլայի մի մանեակ ,  
 Եւ երբ դու ի հանդէս  
 Երթայիր , գայի՛ ես  
 Կախուիլ վիզդ աղաւնեակ :  
 Ըլայի բարձ փափկիկ՝  
 Յոր հանդչէր բոյդ գլուխ ,  
 Եւ չրթամբ սիրաբուխ  
 Խօսէի քեզ մեղմիկ :  
 Ըլայի անոյշ քուն ,  
 Ինձ դադար ընտրէի՛



Քոյդ աչեր լուսալի ,  
 Թռչէի լոկ առտուն :  
 Ըլլայի երազ մը  
 Սիրայի՛ն՝ անուշակ ,  
 Եւ քո նինջդ , ո՛վ հրեշտակ ,  
 Խռովէի անզամ մը :  
 Հոգի՛ մը ըլլայի՛  
 Աննիւթ ու անվախճան ,  
 Եւ ըզքեզ յաւիտեան  
 Սիրէի , ո՛վ հոգի .....

1872

**ՓՇՈՒԱՌ ՄՐՏԻ ՄԸ ՀԱՌԱՉՆ**

Շնչէ՛ հողմիկ , այդ բլուրներէն ,  
 Շնչէ՛ ինձ շունչ սիրական ,  
 Ծոցդ ու ծործոր ծիծաղախիտ՝  
 Հիւծեալ հողւոյս թեւեր տան :  
 Նէրա մօտէն կուզամ , աւա՛ղ ,  
 Բաժնուեցայ ես իրմէն ,  
 Ո՛հ , ի՛նչ ախորժ ես դու սրտիս ,  
 Բաժին ունիս իւր շնչէն :  
 Դու այս սրահուս , հողմիկ , կերթաւ  
 Իւր շրթերը համբուրել ,  
 Շոյեւ բուրող իւր մազերը  
 Եւ ճակատը հովահրել :  
 Թռի՛ր , հողմի՛կ , նէրա մօտը ,  
 Այլ իմ հողւոյս կէսն ալ տա՛ր ,  
 Խունկեր բուրէ նէրա սրտին՝  
 Որ իմ յուզմունքս յիշէ յար :  
 Եւ թափանցէ՛ իւր սրտին մէջ ,  
 Գտի՛ր հոգին գեղազմայլ ,  
 Զօնէ՛ հոգիս ծաղիկ մ՛իրեն ,

Թող չը թօշնէ՛ անոր փայլ :  
 Շուշանափայլ կուրծքը գրկէ՛ ,  
 Ա՛ն իմ հողւոյս կարօտներ ,  
 Տեսնել եկայ ու հեռանամ ,  
 Մօտը ձրգէ՛ իմ իրձեր :  
 Այդ բլուրներ ու փապարներ՝  
 Ո՛հ՝ երջանիկ են քան զիս ,  
 Զի կը մնան անոնք ամեն՝  
 Ե՛ս չեմ մնար մօտ կուսիս .....

Դալարազեղ այդ կղզեակներ  
 Եւ պաղպաջուն ջրոց ծաւալ՝  
 Ո՛հ նախանձով զիս վառեցին ,  
 Զեղան ինձ պէս սիրահալ :  
 Ծործորներուդ ծոցէն թռի՛ր ,  
 Շնչէ՛ հողմի՛կ սիրահոս ,  
 Քեզ իմ հողւոյս թեւերը տամ՝  
 Դու անոնցմով երթ առ կոյս .  
 Իւր մօտ ձգէ այդ թեւերը  
 Եւ դու անցի՛ր սլացի՛ր ,  
 Ո՛հ ի՛նչ ախորժ ես դու , հողմի՛կ ,  
 Թէ իմ աւանդքս տարիւր .....

1872

**ՀԷՔ ՊԱՏԱՆԻՈՅ Մ՛ԵՐԱԶՆ**

Բոյնէս հեռի , նման թռչնոյն  
 Զոր փոթորիկն ի ծով վարեց՝  
 Յահեղ ալեաց հէ՛ք խուսափուն  
 Իւր թառն ի կայմ նաւու մ՛ընտրեց ,  
 Այցէի դրոյն քո սիրուր՝  
 Քո կրակներով հոգեատոջո՛ւր .  
 Զիս իբրեւ հիւր մեծարէիր ,  
 Այրէի՛ ես հրովքո սիրոյն



Եւ քո տեսոյդ կարօտալիբ՝  
 Ծարաւէի քոյդ աչերուն .....  
 Ո՛հ ե՞րբ մարէր այս հուր , ո՛ր կոյս ,  
 Զոր հրդեհեց քո սէ՛ր անոյս .....  
 Երազէի իբր յարթնութեան՝  
 Մինչ խօսէի քեզ հետ՝ ապշած  
 Թէ ո՞ հիւսեց հրեշտականման  
 Այդ դէմքն ու գեղն այդ քո աչաց ,  
 Եւ սեա՛ւ ի բիբօդ ընկղմելով  
 Խնդրէր հոգիս իւր սիրոյն զով .....  
 Երազէի՛ ես ի քուն խոր ,  
 Այլ վա՛հ գիտէ՞ր ննջել հոգիս .....  
 Եւ կը մարի՞ արդեօք սէր զոր  
 Հողուոյս հմայիւքն արկեր դու յիս .  
 Երբ արթնցայ , չէի՛ր ինձ մօտ .....  
 Գէթ կը յիշե՞ս զիս , ս՛վ անգութ .....  
 1872

ԿՈՅՍՆ ԱՌ ՎԱՐԳ

Սիրեմ՝ ըզքեզ , ե՛կ սիրայնո՛ց դու Եղիւս ,  
 Ի քեզ սիրտ իմ անձկաց դիտել զիւր իսկ գարդ ,  
 Քեւ հիւսեցին զնկար սրտին իմ ո՛վ վարդ ,  
 Ե՛կ , ո՛հ ի քեզ սիրտ իմ փայլի գեղա՛հիւս :  
 Սիրեմ՝ ըզքեզ , դու որ երբեմն ի կոկոն  
 Շառագունեալ ըզթերթըս քո ծածկէիր ,  
 Նման որոց և իմ սրտին սիրալիբ  
 Թելքն աղեկէզ ո՛հ լռեցին քանիօ՛ն :  
 Սիրեմ՝ ըզքեզ , ե՛կ իմ սրտին խօսակից ,  
 Լռեսցէ քնար , իմ սիրտն ի քեզ դարեսցի ,  
 Գու փթթեցար , ո՛հ ե՞րբ իմ սէր փթթեսցի ,  
 Գու խօսեցար , ցե՞րբ ես տրտում լուռ կացից :

Սիրեմ՝ ըզքեզ , դու խնկանուէրըդ բարուառ ,  
 Տիպար սրտի յոր ծուխը սիրոյ են ամհոսի ,  
 Գու բուրեցեր սիրահարին առ ի սփոփ ,  
 Ծառալեսցի երբ խունկ սրտիս սիրալառ :  
 Սիրեմ՝ ըզքեզ , ե՛կ թագուհիդ իմ ոգուց ,  
 Ծաղկանց ի շարս ընտրեցար դու սիրանուէր ,  
 Եւ ես յողուց իմ ընտրեցի ո՛հ ըզսէր՝  
 Զոր ձօնեցից առ քեզ , ծաղի՛կ սիրայնոց :  
 Սիրեմ՝ ըզքեզ , մի թօշնեսցիս դու , ո՛վ վարդ ,  
 Զի և զիմ սիրաս այս խամբեսցես դու ընդ քեզ ,  
 Գու բիւր համբոյրս յինէն այսօր գըրաւես ,  
 Այլ մի՛ գուցէ անկցին թերթք քո բարդ ի բարդ :  
 Սիրեմ՝ ըզքեզ , դու ի ձեռս իմ զինչ թուչուն՝  
 Ճախրես մեղմիկ սիւքին ի շունչ թեւաւոր ,  
 Այլ մի՛ գուցէ փետեալ անկցիս վիրաւոր ,  
 Ընդ քեզ սիրտ իմ ո՛հ նուաղեսցի՛ դողդոջուն :  
 Սիրեմ՝ ըզքեզ , կա՛ց իմ շրթանց ի համբոյր ,  
 Յօղեսցին յար ի քեզ իմ սիրտ , սէր , ոգիք ,  
 Այլ թօթափի՛ն ահա թերթքըդ քո փափկիկք ,  
 Այդպէ՞ս և իմ խամբեսցի սիրտ սիրաբոյր .....  
 1875

10127-57

ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԹՈՉՆԻԿՆ

Ա՛յ իմ թուչնիկ փափկաթեւ ,  
 Է՞ր դու թըռար յիմ ձեռաց ,  
 Անմեղ կենաց քոց յարեւ  
 Միթէ չէի՞նք ես դթած .  
 Ի վանդակի պահելով՝  
 Ըղձիցն իմ կէտ ոգեկան ,



Ո՞չ խնամեցի զքեզ սիրով,  
 Ողիքս առ քեզ ո՞չ բացան :  
 Այգուն այգուն սընունդ քեզ  
 Ո՞չ յիմ ձեռաց ջամբեցաւ ,  
 Եւ գգուանօք իմ պէսպէս  
 Չ'արբուցի՞ր ես զքո՞ ծարաւ .  
 Յերեկոյի զքեզ առեալ  
 Ի խուցն իմ ո՞չ ջեռուցի ,  
 Յայգուն ըզքեզ ես դարձեալ  
 Ի բացօթեայ վայր չ'ածի՞ր .  
 Իբրեւ ըզհաւ զիւրն ըզձագ  
 Ո՞չ պահեցի զքեզ միթէ  
 Ձերծ յոտխաց քոց անյագ՝  
 Յուրուրոյ և յանդեզէ :  
 Քանի՛ցս առ քեզ զիւր տտուն  
 Շարժեալ՝ ոստնոյր անարգել  
 Երախտամոռ չար կատուն ,  
 Ո՞չ փութացի զայն վանել .  
 Ճուռողէիր ահարեկ ,  
 Ես ո՞չ գայի առ քեզ հուպ ,  
 Լքէի՞ զքեզ ես երբէք ,  
 Յուզէի՛ր զիմ սիրտ ի ծուփ :  
 Իմ համբուրից ի տրիտուր  
 Ի քէն երգել ես ուսայ ,  
 Գեղեղէի՛ր քաղցրալուր ,  
 Ո՞ քոյդ երգոց ոչ անձկայ :  
 Փայփայելով զքոյդ իրան՝  
 Սիրե՛լ ուսայ ես ի քէն ,  
 Ձերդ ի մօրէս ես յորրան՝  
 Դու սիրեցար և յինէն :  
 Ա՛յ իմ թռչնիկ սիրական ,  
 Ընդէ՞ր տպա դու փախեար ,  
 Քո մայր կամ ձագ դարձիդ մնա՞ն ,  
 Ողբա՞ն ըզքեզ անդադար :

Ո՛հ , թէ իմ գիրկ , սիրտ , համբոյր  
 Ոչ բաւական եղեն քեզ ,  
 Գոնեա յիմ տան ոչ ուրուր՝  
 Ոչ անգղ առ քեզ հպին վէս :  
 Ձի քո ծընողք գուցէ արդ  
 Կորեան դոցա ի կապուտ ,  
 Կամ սրսողաց ի թակարդ  
 Հարան ի հուր ժանտաժուտ :  
 Կուցէ երբէք ըզքո՞ բոյն՝  
 Որ քոյդ եղեւ խանձարուր ,  
 Դու ընտրեցե՞ր լաւագոյն  
 Քան զապաստան քեզ այլուր .  
 Այլ խուժադուժ գուցէ ձեռք  
 Ձքո՞ բոյն այժմիկ քանդեցին ,  
 Արդ ո՞ւր երթաս , անդ ուր վէրք ,  
 Աւեր , թակարդ քեզ բացցին :  
 Ա՛յ իմ թռչնիկ , սրախ խոց  
 Եւ լաց աչացս յանձանձես ,  
 Ա՞յս քեզ արժան բանք ցաւոց ,  
 Ինձ ողբալ պա՞րտ էր այսպէս :  
 Բայց դու ահա ինձ հանդէպ  
 Ծառոյն կացեալ ի վերայ՝  
 Կայտուես ի խինդ տարադէպ ,  
 Ո՛հ սիրտ իմ քե՛զ քե՛զ անձկայ :  
 Ոստախաղաց թեւածես՝  
 Բերկրապատար ի կայթիւն ,  
 Ոչ եւս առ իս ակնարկես ,  
 Ո՛հ դու առեր նո՛ր աւիւն :  
 Ուրեմն առ քեզ իմ վանդակ  
 Երեւեցաւ բանտ անել ,  
 Իմ աղածրի ձեռք՝ ծուղակ՝  
 Առ քեզ անձուկք ի թեւել .  
 Եւ չէր ինչ քեզ սիրելի  
 Քան զինքնակամ ընտրել զճամբ ,



Ինքնին առնուլ զըմպելի ,  
Ինքնին սլանալ թեւածմամբ .....

1875

ՀՐԱՎԱՌ ԱՂՁԻԿՆ

Շողան նէրա աչք հեղիկ ,  
Այլ նէ զըւարթ հի՞մ ոչ է ,  
Երգէ , այլ հի՞մ հառաչէ .....  
Հըրաւառ է այն աղջիկ .  
Նէ կը վառի՛ ..... և բնութեան  
Սլանան ի թեւս իւր տարփանք ,  
Նէ գարուն է ծաղկերանգ՝  
Եւ յառի ընդ գեղ գարնան ,  
Մերթ իւր ոգիք ընդ այեր  
Սաւառնաթեւ սլացեալ ,  
Ձանհուն կապոյտ , զաստեղց փայլ  
Գրկեն՝ սուզին ի յեթեր .....  
Երբեմն յամպոց թեւս յեցեալ՝  
Յանհունութեան սուրարչաւ՝  
Խնդրեն խանդք իւր փոթորկաւ  
Ձհետ կայծականց ընթանալ .  
Իջեալ ապա շեշտ ի վայր՝  
Ընդ սահանաց ի յերկիր ,  
Այն տարփանաց բոցալեր՝  
Ի ծովափունս տան դադար :  
Որոտընդոստ ամալք ցրուին ,  
Պարզի այեր , և ահա  
Թըռիչս առեալ խանդք նէրա՝  
Վերասլանան զհետ արծուին .

Վայրիջանեն ի պուրակ ,  
Ըզթառ խնդրեն սոխակի ,  
Ուր դայլայլիկ գեղգեղի՛  
Ձեղուն նէրա հառաչանք .  
Եւ բարձրաբերձ ի ծառոց  
Երազաթուիչ վայր իջեալ՝  
Ընդ դալարիս գնան թաւալ  
Ի խոնաւել զաւիւն բոց .  
Ապա գընան հեւ ի հեւ  
Ռեզրն արծաթի առուակին ,  
Ընդ խոխոջանան ըզմայլին՝  
Յափշտակեալ ակներեւ .  
Եւ ի շնչել զեփիւռին  
Բանան զանձուկս հոգեկան  
Եւ աւանդեն իղձս առ այն  
Հառաչելով սրտագին .  
Ի լուր երգոց զուարթ ի քնար՝  
Նէրա տարփանք բորբոքին  
Եւ գուսանին ըզգործին  
Ընտրեն իւրեանց ի դադար .  
Եւ թօշնի մինչ հուսկ ծաղիկ ,  
Նէ մշտափթիթ գարուն է ,  
Եւ սիրտ նէրա դեռ արուիէ ,  
Ձի հրավա՛ռ է այն աղջիկ .....

1875



Լ Ե Ի Ո Ն Ի Ս Ն

Ընդ Եղիսեան հովանեաւ  
 Ծընեալ գողարիկ՝ գիրդ մանուկ՝  
 Ե՛րբ այդ ծիլ նոր ծլեցաւ  
 Բուրաստանին՝ Նորատունկ .  
 Քաղցրահամբո՛յր այդ ծաղիկ ,  
 Բուրումն և գեղ յինքն ամիրոփ ,  
 Յայդ ո՛չ գլխի թիթեռնիկ ,  
 Շուրթն ի համբոյր կայ յապշոպ .  
 Սուրայ ի գիրկ ի գրկաց՝  
 Հանգունատիպ թռչնիկին՝  
 Յոստոց ի յոստ ճախրասլաց  
 Ի թռիչ՝ ի խաղ կաթոգին .  
 Ի տես բբաց իւր փարփառ՝  
 Կըքի աչեզն աղաւնին ,  
 Ի տես դիմաց իւր կայտատ  
 Շիկնի շուշանն ի չըղին .  
 Ժպտի , խայտայ և ճչէ ,  
 Նա քան ըզբնաւս երանեա՛կ ,  
 Զի դեռ յաչխարհ խնդիցն է  
 Վշտաց անդէ՛տն այն տատրակ .  
 Ծընա՛ւ՝ վասն ոյր նա ցնծայ ,  
 Քա՛ղցր է յաչխարհ ծընանիլ ,  
 Գեռ յիւր ծնունդ նա խայտայ ,  
 Թողցի՛ նմա համբուրիլ .  
 Ծընեւասէր փայփայանք  
 Զցո՛ղ այդ ծաղկան արբուսցեն ,  
 Որդեգորովն այն գգուանք  
 Կեա՛նս թռչնեկիդ մատուսցեն :

1875

Կ Ո Յ Ս Ն Ա Ն Ո Ք

Ծաղկո՛ւնք հոյլ ի հոյլ մինչ ի բուրաստան  
 Ի պարտիզպանէն առնուք ըմպելի ,  
 Քանի՛ բարեբաստ աւուրք ձեզ տըւան՝  
 Քան զանո՛ք աղջկան որ կայ ծարաւի :  
 Թռչո՛ւնք բոյլ ի բոյլ որ ճախրէք յայեր՝  
 Երկինք զձեր վաղուեան ջամբեն զկերակուր ,  
 Քանի՛ հայրախնամ տըւաւ ձեզ այդ սէր  
 Քան զանո՛ք աղջկան որ քաղցնու ի զո՛ւր :  
 Աստղո՛ւնք փայլ ի փայլ մինչ յերկնից կամար  
 Փողփողիք ազատ ի լոյս և ի յոյս ,  
 Քանի՛ հրաշաղան փայլեցայք դուք յար  
 Քան զանո՛ք աղջկան որ մընաց անլոյս :  
 Գառի՛նք խոււմբ ի խոււմբ որ ի դաշտ՝ յարօտ  
 Դիմէք հեզագնաց ընդ ակամբ հովուին ,  
 Քանի՛ գըլթալի է Ձեր անմեղ հօտ  
 Քան զանո՛ք աղջկան յոր աչք ոչ հային :  
 Ո՛հ լիցի՞ և ինձ՝ զի ոք յաչխարհի  
 Շարժեսցի՛ ընդ իս յայն գութն հովուական ,  
 Նախ քան զարտասուուաց բղխիլ յիմ՝ սրտի  
 Զոր ցարդ հոսեցի ..... վայ անոր աղջկան :

1875



Ո Ր Ք Մ Ա Ն Կ Ի Կ Ն

Այն որք մանկիկ փայփայելի յիւր ճակատ  
 Դեռ ոչ գգուանս ըզգաց լրիւ մայրենի ,  
 Եւ չուրջ զիւրեւ ի զուր խնդրէ սրտակաթ  
 Ըզհայրականն որդեգորով հովանի .  
 Մինչ երէկին յերեկոյի նա ի սնար  
 Գրկացն իւր հօր դընէր ըզգլուխն իւր ի նինջ ,  
 Ըզնոյն այսօր նա խնդրէ ո՛հ վայրապար  
 Եւ արտասուք ծանուկք փակեն զաչս իւր ջինջ .  
 Հայի ընդ վայրս ուր ընդ երէկն իւր մայրիկ  
 Հանգչէր՝ խօսէր ընդ սիրասունն որդեկին ,  
 Հայի ուր խոնջ ի վաստակոց իւր հայրիկ  
 Գարծ և դադար առեալ բերկրէր յընտանին .  
 Ձիարդ կանուխ գունատեցաւ իւր երես  
 Որ ընդ երէկն էր դեռ կայտառ՝ կարմրագոյն ,  
 Եւ զիարդ վաղ փախեան ժպիտք իւր պէս պէս ,  
 Ձերդ բոյն թռչնոյ՝ աւերացաւ և իւր բոյն .  
 Յայգուն զարթեալ նախկինն ածէ զծնողս ի յուչ  
 Եւ զո՛ւր յածէ նոցին ի աես զաչս հեզիկ ,  
 Յամաքեցան աղբերք չրթանց փաղաքուչ ,  
 Համբոյր՝ գորով վա՛ղ լըքեցին զորք մանկիկ :  
 Վա՛հ , այն մանկիկ դեռ հօր և մօր կարօտ էր  
 Ծընողագութ սիրոյ՝ խնամոց կաթոգին ,  
 Ձինչ նորատունկ դեռ նորափթիթ ընծիւղէր  
 Եւ կարօտ էր յենարանի ծընողին .  
 Գորովեցան ոմանք ընդ որքն այն մանկիկ ,  
 Կինն անորդի ասէր՝ առից զայդ յորդի  
 Եւ այրն ասէր՝ ո՞ր հայր եթող զայն մէնիկ ,  
 Թշուա՛ւ մանկիկ , ի տես իւր սիրտ յօչտփ .....

Եւ լայր մանկիկն երբ առին զայն յորդեգիր ,  
 Իսկ գթութիւն եկն ըսփոփել գվիշտ նորին ,  
 Եւ աղօթէր այն որք մանկիկ վշտակիր՝  
 Ձի ի նոր կեանս ածէր զայն գո՛ւթն երկնային .....

1875

Հ Ո Վ Ի Ի Ն

Ի դալարուոյ ընկողմանեալ յեց ի թեւ՝  
 Հանգիր , հովիւ , տայ զհոսակ ողջոյն քեզ արեւ ,  
 Ահա հողմիկ՝ բուրաստանաց այցելուն՝  
 Գայ շնչել քեզ զիւր շունչ մեղմիկ՝ զովասուն .  
 Ճակատ քո իւ խորչոմեցաւ , ասա՛ ինձ ,  
 Ո՞ք արարին զայդ տիպ մարմնոյ տրամալից ,  
 Ծանո՞ւնք արդեօք եզեն բեռինք քեզ ամաց ,  
 Մըրճիք ըզքօ՛ աստղ արարին ամպամած :  
 Խաղաղութեան պատկերն էր քո կենաց ծիր ,  
 Խաղաղ այգուն զհօտ քո ածես սիրալիր ,  
 Խաղաղ ի սոյլ ի տուրնջեան դու արածես ,  
 Խաղաղ ըզխաչն յերեկոյի մակաղես .  
 Ուրեմն ասա՛ , զի՞նչ գերես քո տիրեցոյց ,  
 Արդեօք հրապո՞յրս արկին ի քեզ փառք այլոց ,  
 Կամ քեզ տխո՞ւր երեւեցաւ քո խրճիթ  
 Դէտակն յառեալ ընդ մեծատան շէն դաւիթ .  
 Ասա՛ , խաչինք մուրեցա՞ն ի հօտէն ,  
 Յափշտակեաց՞ զոչխար քո զայն անօրէն ,  
 Կամ խաչնամահ՞ զանմեղ դառինտդ աւերէ՞ ,  
 Ասա՛ , հովի՛ւ , սիրտ իմ յալիսդ յուզեալ է :  
 Է՞ր տրամուրթիւն առնէ զչրթուկսդ կարկամ ,  
 Քեզ դառնացա՞ւ բաղդն ասլառում դամ քան զգամ .  
 Կամ արդեօք ընդ երկա՛ր պանդուխտ դու մնացիր ,  
 Եւ ընդ օտար աստեղօք կա՞ս վշտակիր :



Եւ մի՛ գուցէ հեղահամբոյր խաշանց տես  
 Ածցէ ի յուշ քո սիրելեաց քոց զհանդէս ,  
 Եւ ի գգուեկ քո զգառինսըդ գրկաբարձ՝  
 Ձարթնուցուն յոյզք ի քեզ սիրոյ անձկայրեաց .  
 Վա՛հ , մի՛ գուցէ արամեսցիս հէքդ ալեւոր՝  
 Գիտեալ զչարիս ընտանւոյն քո հեռաւոր ,  
 Գիտեալ թէ՛ գայլ յափշտակիչ՝ յերուզակ  
 Այսօր գուցէ քանդէ զխոնարհ քո տընակ .  
 Եւ կաս ախուր , զի դու հովիւ՝ աստ խաշանց  
 Հովուես ըզհօտ՝ մինչ անհովիւ տուն քո մնաց .  
 Այսուի՛կ ճակատդ է խորչումեալ և ախուր ,  
 Եղճակ հովուիդ , խաղաղութիւն խնդրես զճւր .....  
 1875

Պ Ա Ն Գ Ո Ւ Խ Ս Տ Ն

Մի՛ փայլիր , բնութիւն , գեղով՝ գեղգեղով ,  
 Երկնովդ աստղազարդ՝ որ ժպտի ի ծով ,  
 Իբրեւ հարս որ զինք ծաղկօք կը պճնէ ,  
 Տաճար՝ ուր խունկ վարդն և ջահ լուսինն է .  
 Ձի գարուն սրտիս դեռ չը ժպտեցաւ ,  
 Դեռ իմ ընտանիքս ունի սուգ ու ցաւ ,  
 Սեւ ամպեր անոր երկինք դեռ ծածկեն ,  
 Դեռ հեռու մնացի իմ ընտանիքէն .  
 Մի՛ բուրէք , ծաղկո՛ցք , բոյրով համապիլու ,  
 Մարէ՛ բուրժանըդ , հոլաթե՛ւ զեփիւս ,  
 Գնացէ՛ք սիւնեցէ՛ք տարփաւոր սրտին ,  
 Կուսին գեղահներ խոպոպեաց ծփին .  
 Ձի պարտէզ սրտիս դեռ չը ծաղկեցաւ ,  
 Աւարն անդութին դեռ չը դադրեցաւ ,  
 Մեր յուսոյ դաշտեր դեռ ոչ բողբոջեն ,  
 Դեռ հեռու մնացի իմ ընտանիքէն .

Մի՛ հոսէք , առո՛ւք կարկաշուն՝ վճիտ ,  
 Որ կերթաք ցօղել թուփեր խիտ առ խիտ ,  
 Իբր ի հայելւոջ աստղեր իրենց դեղ  
 Եւ թռչներ նային ձեր ծոցը բիւրեղ .  
 Ձի աղբիւր սրտիս դեռ չը բղխեցաւ ,  
 Փուշեր ընտանիքս ո՛չ թողին բընաւ ,  
 Յօդք խաղաղութեան դեռ ոչ կայլակեն ,  
 Դեռ հեռու մնացի իմ ընտանիքէն .  
 Մի՛ երգեր , սոխա՛կ՝ ի թառ պուրակին ,  
 Որ շուրթն ես գարնան , լեզու՝ սիրողին ,  
 Ախորժ չեն սրտիս քու դայլայլիկներ ,  
 Լուէ՛ դու սոխակ՝ ձայնդ իս չը թովեր .  
 Ձի ձայնը սրտիս դեռ չը քաղցրացա՛ւ ,  
 Դեռ իմ ընտանեաց լալիք են անբա՛ւ ,  
 Վա՛հ , սրտիս վէրքեր դեռ արիւնտտ են ,  
 Դեռ հեռու մնացի իմ ընտանիքէն .....  
 1874

ԱՌ ՍՐԱՊԻՈՆ ԷՓ ԳԵՔԻՍԵԱՆ

Ն Ո Ւ Է Ր

Երբ սրտի ձայնին  
 Սիրտ տայ պատասխան ,  
 Ի տրիտուր հիւսուին  
 Նըւէրք գանազան .  
 Ծառայն տիրուհոյն  
 Ծաղիկ տայ փունջ փունջ ,  
 Հայրն իւր ընտանւոյն  
 Բարբառ սիրաշունչ .



Շուշանն իւր ծոցիկ  
 Բոյն շինէ շողին ,  
 Առուն երգ հեզիկ  
 Աստեղաց շողին .  
 Մարգարիտ գարնան  
 Յօղէ արշալոյս ,  
 Եւ սիւքին՝ զորրան  
 Թերթից՝ վերջալոյս .  
 Պըւէտն առ բնութիւն  
 Զիւր Որփեայն քընար ,  
 Կուսին՝ թեւն հոգւոյն  
 Լարէ սիրահար :  
 Հանճարեզ ոգիդ ,  
 Ոյր սէրն իմ գտեր ,  
 Եւ ես քո սրտիդ  
 Բերեմ սիրտս ի նուէր :

1875

ԼՈՒՍԻՆՆ ԵՒ ՉՄԵՌՆ

Զմեռ է ցուրտ , գիշեր է լուռ և տխուր ,  
 Դու կը ցոլաս , դու կը ժպտիս լուսահուր ,  
 Անգարդ բնութեան հրաժեշտ տըւած աչքս յառին  
 Քու լոյս դէմքիդ՝ պայծառ ճակտուղ , ո՛վ լուսին .  
 Զիւնն ու սառույց մի՛ փայլեցներ , ո՛վ լուսին ,  
 Որպէս գոհա՞ր կուզես ցոյց տալ աղքատին՝  
 Ինչ որ կընեն ասի մ՛աճուխի վինք կարօտ ,  
 Գիշերն անյոյս՝ վաղուին անյոյս առաւօտ .

Միթէ փայլող լոկ փարթամին ժպտ մ՛է ,  
 Իսկ տնանկին արցո՛ւնք միայն կը սրսկէ ,  
 Սա զբեզ լալով դիտեց՝ իսկ նա ժպտելով ,  
 Եւ դու շողաս հիքոյն աչաց՝ անգորով .  
 Ի՛նչ , ե՞րբ կուզես որ գորովիս՝ քաղցրանաս ,  
 Եւ վառ ցոլքէդ հէք սրտերու շող մը տաս ,  
 Կուզես քընա՞ր զոր չքնազ կոյս մը զարնէ  
 Քնքոյշ մատամբն և աչքն աղու քեզ յառէ .  
 Ըսէ՛ , լուսնա՛կ , պալա՞տ կուզես ծովեզրեայ  
 Որոյ զպատկեր զծես յալիս բիւրեղեայ ,  
 Եւ արձակես շողդ ի դահլիճ խրախճանաց ,  
 Յոսկի գահին , և դշխոյից ի նայեաց .  
 Վճիտ ծովե՞ր կուզես ընտրել հայելի  
 Կամ ջինջ լճակ ուր փողջիտղիս լուսալի  
 Եւ անոնց մէջ քու պըրանքըդ ցոյց տալով՝  
 Ըզմայլիս թէ ի՛նչ գեղեցիկ ես տեսքով .  
 Պուրա՞կ կուզես՝ որոյ ծառոց բարձրաթուիչ  
 Վերայ սիռես լոյս քո քղանցիդ ծալքեր ջինջ ,  
 Եւ սաղարթուց մէջէն ցանես ցիր և ցան  
 Արծաթածամ խոպուղիքըդ լուսերփեան .  
 Սիրե՞ս փայլել կարկաչասահ առուին վրայ ,  
 Լսել խոխոջն որ գոգցես նուազ քեզ յընծայ  
 Կը յօրինէ ալեակներուն իւր բերնէն՝  
 Որ ցոլքերուդ համար տրիտուր քեզ բերեն .  
 Եւ հէք մշակն՝ որ այն առուին ակնդէտ՝  
 Շողերդ իրեն կը նըկատէ աստղեր գէթ  
 Բերրի գարնան մ՛արշալուսոյն ցողաբեր ,  
 Յուսա՞յ թէ լայ ..... թշուառն ե՞րբ է խնդացեր .  
 Ո՛վ որ կապոյտ երկնից յանեզրն ովկէան՝  
 Ուր լուսածուփ ալեակք աստեղց կը պլլլան ,  
 Նաւարկելով՝ աչքդ ընդ ոլորտս աշխարհին  
 Յառես , և աչք տիեզերաց քեզ հային , —



Դու որ՝ քսակն այրւոյն տուող կուսին պէս՝  
 Լոյս սափորէդ գիշերին փայլ կը շնորհես ,  
 Եւ ըզբնուեթիւն ծածկես լուսոյ ծաղբերով՝  
 Ինչպէս մերկին ճոխ մը հագուստ տայ գըթով .....  
 Դու / ո՛վ լուսին , որ լուսեղէն անուրիք ծիր  
 կը բոլորես յաստղափրթիթ դաշտն անծիր ,  
 Եւ շանթածիզ ասպարէզէն մըրկաց  
 Միշտ յաղթական՝ և ամպահերձ կաս ի սլաց , —  
 Եւ բրարիոնն առած գլխուդ աստղահիւս՝  
 Դիւցածն երկնից՝ թռչիս օդոց անդր ի նիւս ,  
 Անօսր ու նուրբ ամպիկներու ծուէններով  
 Մերթ խոնջ ճակտուդ քրտուռքները սրբելով , —  
 Դու , ո՛վ լուսին , ամենատես ցոլքիդ թեւ  
 Տո՛ւր այս պահուս ոգւոյս ընկեր գնալ թեթեւ .  
 Եւ տնանկին՝ ոյր հիւղին մէջ ջահ չըկայ ,  
 Լոյս տուր պահ մը և շողդ իրեն յոյս մը տայ .  
 Եւ երբ աչեր այրւոյն՝ որբոյն՝ սովելոյն՝  
 Արտասուախառն յառին պնուեն քո լուսոյն ,  
 Մին ամուսնոյ՝ մին հօր կամ մօր՝ միւսն հացի  
 կարօտ մնացած , կարօտ նաեւ կարեկցի ,  
 Այրւոյն մտաց առաջնորդէ՛ լուսաթեւ ,  
 Իւր փեսային ցուրտ տապանին տա՛ր վերեւ ,  
 Եւ բիւրաւոր անըջոց մէջ սիրատես՝  
 Ճառագայթէ՛ սիրեցելոյն իւր զերես .  
 Առաջնորդէ՛ որբոյն մտաց սիրասլաց ,  
 Տա՛ր դամբարանն իւր կաթողին ծընողաց ,  
 Գէթ խեղճուկն այն պահ մը լուսովդ ըսփովի՛  
 Առաքելով անոնց համբոյր անձկալի .....  
 Իսկ սովելոյն ի՞նչ ընէ փայլդ , ո՛վ լուսին ,  
 Որ մահավերձ տեսնէ գնօթի ընտանին ,  
 Եւ վերցնելով լացող մանկիկն առ Աստուած՝  
 Լուսինն ի՞նչ է՝ գոչէ՛ մեռնինք մենք անհայն .....  
 Մեռան անոնք , և դու լուսին միայնակ

Կեցած իրրեւ ըզլացող բուն յաւերակ՝  
 Ի՞նչ կը շողաս , հոն հս՛ւր թըլիս , թող ամպեր  
 Գան հողմափար ծածկեն զգթոյ քո սպակեր .....  
 Ծաղէ՛ յետոյ տարիաւորին հեռակայ  
 Որ անձկութեամբ իւր հրեշտակին կը մըխայ ,  
 Պայծառ փայլէ՛ երթալ սրտին անձկայրեաց  
 Իւր պաշտելոյն , իւր նազելոյն գիրկն ի յայց :  
 Եկո՛ւր , լուսին , և իմ հոգիս տա՛ր դու հոն՝  
 Ուր վաղամեռ իմ մայրն անոյշ քանիօ՛ն  
 Յուրս բլրի մը ցուրտ հողերուն տակ հանդէլի ,  
 Ահա հոգիս քու թեւօքդ հոն կը թռչի .  
 Եւ աղէկաւոր իմ մօր շիրմին առ ընթեր  
 Քաղցրիկ իմ հօր հողակոյտն ալ են կցեր ,  
 Քառորդ դարու այն ամոլից՝ ո՛վ Աստուած՝  
 Նոր առագաստ սեւ հո՞ղն էիր որոշած .....  
 Ըսէ՛ , լուսնա՛կ , սիրտս այն բլրին ի վերայ  
 Բիւր աղէխարչ մըմունջներով զո՛ր ցանկայ  
 Պատասխան մը արթնցնել հողերէն ,  
 Խօսէ՛ , իրենց սիրոյն տիպա՛ր լուսեղէն ,  
 Շիրմին ներքեւ զիրար սիրել կա՞յ միթէ ,  
 Եւ կամ ոսկերք զիրար ճանչէն ո՛հ ըսէ՛ ,  
 Զի հայրս ըսա՛ւ երբ մայրս իրեն հարս գընաց՝  
 Խօսքն Ադամայ՝ սա ոսկր իմոց յոսկերաց .  
 Եւ կամ իրենց նշխարներն ալ անմեկի՞ն  
 Յեա մահուան իսկ պէտք էր իսպառ մընային ,  
 Զի կատարուէ՛ր հրաման երկնից , և մեզ ալ՝  
 Յեա մահուան իսկ՝ իրենց սիրոյն դասը տալ .....  
 Եւ երբ օր մը ի մահ փակին իմ աչեր ,  
 Ա՛յսպէս շիրմիս պիտի ցայտես քու շողեր ,  
 Եւ ուրիշ մ՛ալ արդեօք այսպէս սիրասլաց՝  
 Յիշատակաւս ուղղէ՞ պիտի քեզ նայեաց .....  
 Լուսնա՛կ , եթէ ծնողացս հոգիք դէպ ի քեզ  
 Նային յերկնից՝ որբոցս յուշով սիրակէզ ,



Անհո՛ւն խոհմամբ թէ մենք ալ այժմ իրենց հետ  
 Գու սկաւառակըդ լուսեղէն տեսնեմք զէթ ,  
 Եւ փոխադարձ մեր կարօտանք՝ լուսոյդ ծոց  
 Թէ յագեանն , փայլէ՛ , դու սիրտի ես ցաւոց ,  
 Դու մեր ոգւոց թեւերն ի լոյս կը պարզես  
 Տարածելով երկրէս յերկնից ասպարէզ .....  
 1875

ՈՐԲ ԱՂՁԻԿՆ

Մտքիս մէջ  
 Կայծ մի կայ՝  
 Որ անշէջ  
 Կը ցոլայ ,  
 Կը ձգէ հուր  
 Կուրծքիս տակ ,  
 Այն տխուր  
 Յիշատակ .....  
 Սրտիս խոր  
 Մի հողմիկ  
 Մեղրածոր  
 Շընչէ ձիգ ,  
 Եւ խունկ մի  
 Կը ծխայ հոն  
 Քաղցուենի ,  
 Յոյսն անհուն ...

1875

Մ Ա Ն Կ Յ Ի Ն

Թոյլ տուք մանկտուոյդ գալ առ իս  
 Ըսաւ Յիսուս գրկարաց ,  
 Ոչ իբրեւ հայր զիւր որդիս՝  
 Այլ կը գրկէր իբր Աստուած .  
 Աստուած՝ որոյ որդիք են  
 Անմեղն և որքն աղքատիկ ,  
 Աստուած՝ որոյ սուրբ գրկէն  
 Կը բղխի սէր երջանիկ .  
 Նորա գիրկը դրախտ մի է՝  
 Ուր իւր սէրն է մի աղբիւր՝  
 Որ պաղպղուն կը հոսէ  
 Անբիծ հոգւոց մէջ անդորր :

1877

Հ Ա Ր Ս Ն

Ի՞նչ է հարսը , կոյս մը՝ սիրոյ բուրաստան ,  
 Որ մէկ ձեռքը սափոր մ'ունի մեղրահոս ,  
 Միւսը՝ չքնաղ փունջ մը ծաղկանց երփնազան ,  
 Թուշի՝ հրեշտակ , ձայնէ՝ թռչուն քաղցրախօս .  
 Եւ ցոյց տալով սափորն ու փունջ փեսային՝  
 Կ'ըսէ՝ խամբի՛ մին՝ միւսն անկէ կը բղխի ,  
 Կը տեսնենք աստղն եթէ տոկանք փոթորկին ,  
 Փշրի կոհակն՝ որքան ժայռին դէմ բաղխի .....  
 1878



ՄԱՅԻՍԻ ՎԵՐՁԱԼՈՅՍ

Ի ՔԱՂԿԵՂՈՆ

ԱՌ 3. ԴԻՄԱԲՍԵԱՆ

Տէս, գարուն է, հիմ դեռ տքնիմք աստ 'ի դիր .  
Արեւն 'ի մուտս իւր խոնարհի լուսալիբ՝  
Իբրու ակնարկ բարեկամին տարագնաց՝

Վառ ի յետին իւր հայեաց .

Հիմ դեռ տքնիմք . Մայիսն անցնի փոյթ ընդ փոյթ ,  
Մերն է Մայիս, ել բարեկամ, և անբոյթ՝

Սա վայրկեաններն երեկոյեան հանդչիմք գէթ՝

Ընդ գեղ բնութեան ակնդէտ .

Եւ յայց ելած Գուշ-տիլին՝ Հայտարին ,  
Օղին՝ ջրոյն՝ մեր միտքն 'ի ծոց դադարին ,  
Այսպէս խոկմունք յետ ծփանաց ըզլադար

Ի բացօթեայ խնդրեն վայր :

Ե՛կ, անդ եմք անդ՝ ուր այդ հովիտն առաջի  
Խոնջ մեր աչաց գեղատեսիլ տարածի ,  
Այսպէս հողին քաղցր անրջոց ի տեսիլ

Ըզգայ սուրալ և թռչիլ :

Տուր ինձ քո թեւ, դալար ափունք տան հրաւէր  
Մեզ՝ հեղասահ սա ջրոյն գընալ առընթեր ,  
Ո՛հ, չէս ըզգար թէ այդ վրտակն արծաթի

Գոգցես սրտիդ խոր սահի .

Եւ մինչ հողմիկ գարնանաշունչ գայ որբել  
Ըզծոց նորին, գոգցես ոգւոյդ մէն մի թեւ  
Թրթռայ՝ խօսի ալեակներուն ի մրմունջ՝

Բիւր խորհրդոց քոց 'ի շունչ .....

Ե՛կ, չէս ըզգար սա նաւակին յարշաւել  
Ի մեղմածուփ ալեակս՝ ըղձիցդ ըզսահել  
Ընդ հանուրս ուր փափուկն ունի գիւր յուզմունս

Եւ գեղեցիկն արտասուս .....

Ասա՛, 'ի գնալ ընդ ափունս այս խաղաղիկ՝  
Չ'էս երաներ զհանդարտութիւն երջանիկ  
Սը դըղեկաց և տընակաց գետափնեայ ,

Բնութիւնն երբէք հոս կուլայ :

Կամ սա՞ ափանց հանդիպակաց այգեստան  
Չը՞ ներչնչեր 'ի քեզ մի հէշտ տեսլական՝  
Թէ սիրելեաց մի մենարան անդ ունեւ

Բիւրապատիկ էր ապրել .....

Իսկ անդ թփոց մէջ խիտ առ խիտ՝ տէս խայտան  
Պարք թրքուհեաց՝ եւրոպուհեաց վարդանման ,  
Մին ծաղկաքաղ՝ միւսն աչագեղ կը ժպտի ,

Սիրտն հոս երբէք կը տարբի .....

Անդ բուրբուլիկն իւր գեղգեղէ ըզնըւագ ,  
Լըսէս ըզնա, և խոխոջէ աստ առուակ ,  
Այսպէս երկու սիրտք ներդաշնակ ձայնակցին

Երբ գարուն-սէր սընուցին .....

Նայէ, և վարդն իւր շուրթ-թերթեր քեզ բանայ ,  
Շնչէ, և վարդն իւր հողի-բոյր հողւոյդ տայ ,  
Սիրէ, և վարդն իւր սէր-փունջ քեզ ոլորէ ,

Կեանքն անգարուն ոչինչ է :

Իսկ թէ՛ բնութեան այդ խայրիքներ ծաղկածին ,  
Սա ջինջ ու զով այեր, քաղցրիկ շունչ սիւքին ,  
Որք սրտիդ նոր կենդանութիւն ներչնչեն

Եւ զթեւ հողւոյդ փայփայեն, —

Թէ՛ երկնագեղ ծաւի աչաց հանքն անհուն՝  
Սա կապուտակ երկին՝ որբան արեւուն ,



Որ երկնասլաց թեւեր կուտայ խորհողին

Թռչիլ 'ի ծոց անհունին , —

Թէ՛ սա ծիծեռն՝ որ ընդ այեր հեղասահ՝  
Ճռուողելով սուրայ ազատ և անահ ,  
Իբր յիշատակ որ դէսլ ի ծոց թռիչս առնու

Իտէական ժամերու ..... —

Թէ՛ զեփրուիկն՝ որ բուրվառէ ըզհողիդ  
Անուշարոյր խնկով ծաղկանց խիտ առ խիտ ,  
Ծաղկունք՝ դոհարք՝ գարուն կենաց զարդարանք՝

Չոր սիրեցին հարս կուսանք , —

Ասա՛ , թէ՛ սա բացուստ հնչող ձայն քնարի՛  
Չոր հարկանեն մատունք կուսին դեռատի ,  
Քնքոյչ մատունք՝ որ լոկ գիտեն փունջս հիւսել

Եւ քսակ հիքոյն կարկառել ..... —

Թէ՛ լոյս աչեր այն քնարահար կուսանին  
Մինչ ցայգական յաղթս յերկին սեւեռին  
Եւ մի արտօսր՝ սհ՛ կայլակեն ջերաջերմ ,

Յուսոյ շողիկն այն վսեմ ..... —

Թէ՛ նորաիթիթ սա շարքն աստեղց բոյլ 'ի բոյլ՝  
Որ մթամած բնութեան ճակտուն ի նըջոյլ՝  
Ակունք երկնի՛ գարնան 'ի թագ կը հիւսուին ,

Անոյչ խորհուրդք որ ծագին ..... —

Թէ՛ սա անօսր ամպն՝ որ աստղէ աստղ երագ  
Փայփայելով գողցես թռչի միայնակ ,  
Անձո՛ւկ մարդոյ որ յասպարէզ անտահման

Թռանի՛ չընտրէ մի կայան , —

Թէ՛ սա ծովափն և ճեմելիք հոգեզուարձ՝  
Ուր գեղեցիկն ունի մրմունջ , ծոյն աւաչ ,  
Բարախէ լանջն , ալեակն հեզիկ կարկաչէ ,

Եւ ոյց քերթողն ականջէ ..... —

Թէ՛ սա մակոյկն որ կը սլանայ լուսավառ  
Ի մեղմածուփ ալեաց յալիս թիավար ,  
Հողի՛ մարդոյ որ մշտավառ կ'ուղղուի

Անմահութեան ընդ ուղի ..... —

Թէ՛ այս ամենն , ս՛ բարեկամ , տեսանես ,  
Ասա՛ , միթէ՛ այս գարուն կեանք չը սիրես .....  
Մինչ գարուն է՛ ժողվեմք ծաղկունքն երկնազան ,

Վաղիւ մեր կեանք ծերանան :

1880

ԱՌ ՀԻԻԿՈ

Օ Ր Հ Ն Ե Ր Պ

Անէ՛ծք դահճին ..... եկէ՛ք չըւան մահապարտք  
Եւ տի ապրիք , Անայ ափունք ձեզ սպարաստք ,  
Ոգի մ'անհուն հոն ձեզ փրկիչ տի գտնէք .....

Չանմահ Հիւկօն օրհնեցէք :

Անէ՛ծք դահճին ..... Եւ դատաւորք կը գոչեն  
«Մահ ըսպանչաց» . կը չողայ սուրն անօրէն .....  
Եւ տի փշրին այն մարդկային կառափներ .....

Կեցէք , Հիւկօն է յուզուեր .....

Եւ արցունքներ տի խեղդեն իւր սիրտն անհուն  
Որ գորովո՛յ շնորհի ոլկէան մ'է զեղուն .  
Կեցէք , թէ լա՛յ՝ իւր ձայն զախարհ կը լացնէ ,

Կեցէք , Հիւկօն կը ձայնէ՛ .....



Ո՛հ , աի լուսն հիմա շուրինդք զընտանին ,  
Տի խորտակին երկաթն ու սուին մոլեգին ,  
Ձի ոգի մը դէպ 'ի հիւսիս սըրարչաւ

Արեւմուտքէն թուաւ հասաւ :

Հանգիստ տըւէք անոր , նա գութն է ինքնին ,  
Թողէք չրթէն մեղը առուակէ աշխարհին ,  
Թողէք խօսի , և ձեր կայսեր աղերսէ՛

Որ ըսպանչաց կեանք շնորհէ .....  
Նա դըրդին իսկոյն սրտեր մարդկութեան ,  
Երկրէ երկիր ձայնք գորովոյ ընթանան  
Նա արձագանգ խըլեն նաեւ երկինքէն՝

Որ գորովոյ աղբիւրքն են :

Տեսէք , աստղեր , գթոյ աչեր երկնային ,  
Տեսէք Հիւկօն՝ ճառագայթը ձեր սրտին ,  
Որ երկրի վրայ ինկած՝ մըթին խորչերու՛

Բանախց մէջ լոյս կը դեղու :

Տեսէք Հիւկօն , նա վըհերու եզերքէն  
Կը ճողուրէ մահապարտներն անօրէն ,  
Նա կիսափոր գերեզմաններ կը քանդին

Իւր շունչով աստուածային .....  
Նա երբ իւր ձայն՝ որ զըւարթնոց էր վանդիւն ,  
Հայրակորոյս սրտին բախեց թեւերուն ,  
Ո՛հ , այն ժամուն՝ հինգ արիւննուշտ հոգիներ  
Չազիր մահէ նա կը խլէր :

Տեսէք , աշխարհք , երբ իւր չուառները փրկեց  
Լացաւ Հիւկօն՝ բերկրապատար , և ծածկեց  
Արցունքներովն՝ արեան բիծերն այն մեկին՝

Որք այն չուառաց «մա՛հ» գրէին :

Կեցցէ Հիւկօն՝ նա կ'ամօքէ կայսերաց  
Արդարութիւնն , և կեանք կուտայ չըւառաց .....  
Ո՛հ , ե՞րբ և նա ճոխին տայ սիրտ դիւրազգած ,  
Որ չը մուրայ աղքատն հաց .....  
25 Մարտ 1882

Պ Ա Տ Ճ Է Ն

MONSIEUR DICRAN S. SÉTIAN

Rue Déré 102

Ortakeuy

Constantinople

TURQUIE

Paris 17 Avril 1882

Monsieur

M. Victor Hugo a été vivement touché de votre lettre et de l'hommage poétique que vous lui adressez.

Vous l'excuserez, si ses travaux ne lui permettent pas de vous répondre lui-même.

Mais il me charge de vous transmettre ses remerciements et l'assurance de sa sympathie.

Croyez à mes meilleurs sentiments.

RICHARD LESCLIDE



ԱՂԱՐԱՏԻՆ ՆԱՅԸ

Գարուն է , ժամ ժրպխաներու ,  
 Արցունք հոս կը կայլակէ .....  
 Թ'իզ , անգուժ , ծաղկունքըդ մէկըի  
 Հոս նօթին հաց կը խնդրէ :  
 Չ'էս տեսներ , անիքեզ կարկառած ,  
 Իբր առ Աստուած աղօթիկեր ,  
 Աղեկըտուր արծակէ ձայն  
 «Ողորմէ ինձ» ..... չ'էս լեր .  
 Եւ կ'անցնիս , վահ , խո՛ւ՛ անըզգաց  
 Հառաչանացն աղքատին ,  
 Ինչպէս կ'անցնի արծարծելով  
 Հրդեհին հունն՝ հո՛վն ուժգին :  
 Ո՛վ մեծատուն , ճոխ քրսակէդ  
 Թէ լուսայ մը նետէիր  
 Այն ախին մէջ , պատառ մը հաց  
 Նօթի չրթանց տի տայիր :  
 Այլ չ'ես ըզգար ինչ է նօթին .....  
 Կ'ըզգաս ոսկին կուտակել ,  
 Ոսկին ոյր փայլ չը տի կրնայ  
 Մահուդ վիհ լուսաւորել :  
 Ո՛հ , դողդոջուն ձեռք մը բախեց  
 Ոսկեդըրուագ քո դուռը ,  
 Բաց , ո՛վ անգուժ , ճոխ սեղանէդ  
 Հաց կը մուրայ աղքատ մը :  
 Ինչ , տի վանե՛ս այն խեղճ նօթին՝  
 Որ աղօթից մրմունջներ  
 Կ'ուղղէր յերկին քեզի՛ համար .....  
 Գէթ երկին գուժ քեզ շնորհէր .....  
 «Աղքատ է» կը գոչես ներսէն ,  
 Եւ դուռն ամուր կը փակուի ,

«Կտոր մը հաց զաւկըներուս»  
 Կ'աղաչէ ձայնն աղքատի .  
 Եւ ծով մ'աղերս ու հեճկըլտանք ,  
 Արցունքներու ալիքներ ,  
 Ժայռ սրտիդ դէմ զարնուելով  
 Կը փչրին , քեզ չ'են ցնցեր .....  
 Ոսկին ամուր պատեց սիրտըդ ,  
 Այ անողորմ մեծատուն ,  
 Եւ չ'ես շարժիր յարգահատանս  
 Այն նօթետանջ եղկելոյն :  
 Վահ , երբ աղքատն ողողելով  
 Քո դրան սեամբն իւր արցունքով ,  
 Անյոյս քենէ կը հեռանար ,  
 Դու հանգչէիր անխըռով .  
 Բայց թշուառն այն դուցէ անսուաղ  
 Հըսկեց գիշերն այն 'ի բուն ,  
 Գուցէ չ'ունէր հաց չորաբեկ  
 Տալու իւր զաւկըներուն :  
 Ո՛հ , ո՛վ կուտար ճակատագիր  
 Մարդոյն՝ որ այսպէս մուրայ .....  
 Թէ գորովէր սիրան հարուստին  
 Անկեալ մարդկութեան վերայ :  
 Անկաւ հարուստն աղքատացաւ ,  
 Անգըթացաւ՝ երբ կանգնէր ,  
 Վայ աղքատին որ կը մուրայր՝  
 Օր մը նօթի՛ տի մեռնէր :  
 Իսկ դուք , ո՛վ որ ունիք խիղճ մը ,  
 Ողորմեցէ՛ք աղքատին՝  
 Դեռ նա իւր ափ չ'կարկառած .....  
 Մուրա՛յ մեռնիլն է սրտին .....  
 Մուրա՛յ մարդոյն աղօթել է ,  
 Աղօթք երկնից են արժան ,  
 Եւ մարդն ըզմարդ եթէ պաշտէ



Երկինք կը նրսեմանան :  
 Հաց արւէք երբ տեսնէք նօթին ,  
 Այս է մարդոյն ապացոյց՝  
 Թէ ըզգացուն էակն է ինք  
 Ի մէջ այլ արարածոց :  
 Եւ երբ աղքատն ալ չը մուրայ ,  
 Երբ գուժն ինքնին ողորմի ,  
 Վրսեմացաւ մարդն այն ատեն ,  
 Զի գուժն հոգին է երկնի .....

1882

Գ Ո Ւ Թ Ն

Հոգին երկնի՝ զուարթնոյ թեւեր ըզգեցած՝  
 Յամբաւ միջոցն երագ երագ կը սահէր ,  
 Իւր կողերէն ըյս սփռելով աստեղաց՝  
 Կընտրէր դադար անոնց ծոցը լուսահեր .  
 Եւ լուսեղէն աչերն ՚ի վայր յառելով ,  
 Անքուն աչեր՝ որ գիշերով չ'են փակուիր ,  
 Կը խուզէր նա զոլորտս երկրի՝ զհողն և ծով ,  
 Շող կը սրսկէր աւերց՝ ալեաց ցան և ցիր :  
 « Ողջամբ եկիր , ոգի , հրեշտակ կամ աստղիկ ,  
 « Մեզ կեանք տըւիր երբ ծագեցար մեր վերեւ ,  
 « Ողջամբ եկիր , թէ չը գայիր մեզ մօտիկ՝  
 « Տի թաղուէինք փլատակաց մեր ներքեւ » :  
 Կը դադրէր շանթն , և աղքատիկ հիւղերէն  
 Լալահառաչ աղօթից ձայն կը լսուէր  
 Եւ ծեր մըջակն , ոյր լոկ հիւղն էր ապաւէն ,  
 Մանկունքն ի գիրկն յառէր յաստղիկն իւր աչեր :  
 Եւ կը գոռար այնքին մըրիկն ի ծովուն ,  
 Եւ միամայրն իւր որդեկին աղընդէտ՝

Կայր ի ծովափն արտասուագին՝ դողդոջուն՝  
 Խնդրելով իւր միամօրին նաւն անհետ .....  
 « Զաւա՛կս , ո՛վ տէր » ..... և այս հառաչ որդեսէր  
 Կը կորնչէր ի մուռնչն ալեաց հողմավար .  
 Չը կար հոն յոյս ..... այլ հուպ ընդ հուպ կը փոխուէր  
 Ահեղ տեսիլն , կը գրկուէին որդի՝ մա՛յր .....  
 Ա՛ստղն էր ծագեր , և հանդարտեր էր մըրիկ .  
 Այս դին աղջիկն՝ որբ՝ անոքիկ անալաչտալան՝  
 Գերեզմանէ ի գերեզման թափառիկ՝  
 Կողբայր ծածո՛ւկ , ս՛հ ամօթխած արցո՛ւնք կան .....

1882

ԱՌ ԼՈՒՍԻՆ

Երբ քեզ նայիմ , հոգիս կ'առնու  
 Թե՛ւ երկնաչու ,  
 Եւ դէպ ի քեզ կը բարձրանայ  
 Ամպոց վերայ .  
 Իւր կարօտներն ու գորովներ ,  
 Իւր վիշտ և սէր ,  
 Հաղիւ տեսած դէմքդ , ո՛վ լուսին ,  
 Կը նորոգին :  
 Եւ ա՛լ չ'եմ հոս , քեզի հետ եմ  
 Եթերաձեմ ,  
 Եւ դու , ոգի ամենատես ,  
 Կ'առաջնորդես



Մտացս երթալ թառիլ հոն ուր  
 Յաւեր կան բիւր ,  
 Եւ դուն ուրեք կը ցուցնես ինձ  
 Վայրեր խնդից :  
 Գուցէ դու ջան՛ էս երկնալոյց  
 Միայն հիքոց ,  
 Որ գիշերայն ի լոյս կ'ածես  
 Թշուառքն անտես :  
 Գուցէ երկնից ժըպիտն էս դու  
 Մեզ այցելու ,  
 Երբ ծածկէ զմեզ խաւարն անլոյս՝  
 Անարշալոյս .....  
 Գուցէ ակնա՛րկ Աստուածային՝  
 Գորովագին՝  
 Կը հսկես մեր սրտին վերայ՝  
 Երբ սա կուլայ՝ .....  
 Եւ կը տանիս զիս ի շիրիմ  
 Ծընողացն իմ ,  
 Ուր քեզ յառի տրտում հոգիս՝  
 Երբ կը ժպտիս .  
 Եւ սեւ հողէն կ'ոստնուն յեթեր՝  
 Իմ բիւր խոկեր ,  
 Ինչպէս երամբ թուշնոց յովկէան՝  
 Յալեաց խոյս տան :  
 Կը տանիս զիս ի նիւս շողիդ  
 Յանշուք խրճիթ՝  
 Ուր չիք կանթեղ , ուր կերակրին  
 Լուսով քոյին :  
 Կը տանիս զիս ի սնար մըթին  
 Հոգեվարին՝  
 Ոյր հուսկ հայեացքն՝ յոր շող կաթես՝  
 Յառին ի քեզ .....  
 Եւ նաւագին՝ ոյր նաւ զընաց

Ձոն կոհակաց ,  
 Յոյց կուտաս ինձ լատն ալեծուզի՝  
 Որ հուսլ ընդ հուսլ  
 Տի խորտակի ժայռերու դէմ՝  
 Եւ մուռնչ դժխեմ  
 Գուայ հողմոց՝ աղաղակաց  
 Խառն յողբ ի լաց .....  
 Եւ կը նայիս դու ժպտահոծ՝  
 Այն անդնդոց ,  
 Մինչ նաւագին՝ ցոլքըդ ցոյց տան  
 Նա՛ւն օգնութեան :  
 Կը տանիս զիս , ո՛վ դու լուսին ,  
 Արտասուադին  
 Ընկեր բըւոց աւերակաց՝  
 Ուր սիրտս ողբա՛ց .....  
 Վա՛հ , գերեզմանք հոն ցիր և ցան  
 Ի լոյս կուգան ,  
 Որոց հայիս գորովագին  
 Բիւր երկնային .....  
 Եւ հոն , աւանդ , վըհեր խուզես ,  
 Եւ արծուոց պէս՝  
 Լուսոյ թեւերդ յերկին պարզած՝  
 Նայիս վերա՛ց .....  
 Կը թափանցես հիքոյն ի վրան  
 Ուր ի յորրան  
 Հրեշտակատիպ ննջէ մանկիկ  
 Հոգեծաղիկ .  
 Հոն ալ գըթոտ դու կը հսկես ,  
 Եւ յոյս պէս պէս  
 Քու ցոլմանց մէջ կը պըլպըլայ  
 Օրոցին վրայ .....  
 Եւ երբ անյագ քոյին տեսքէն՝  
 Յիս կը խուժես



Հոյլք տարմատարմ' այն խոկերուն՝  
 Ոյց դ՛նւ ես բոյն ,  
 Դու զուարթերես կը շողաս դեռ՝  
 Մէնիկ յեթեր ,  
 Եւ ամենուն՝ ոյք հոս տխրին՝  
 Ժպտիս , լուսին .....  
 19 Ապրիլ 1882

ՄԵՐ ՊԼՊՈՒԼՆ

Ողջոյն , թռչնիկ , լեզու բնութեան , չուրթ գարնան ,  
 Ողջոյն քեզ ,  
 Ո՞վքեզ զրկեց , որ երբ միտք իմ կը ծըլտան՝  
 Դու երգես ,  
 Ամբերլու գեղգեղանօրդ հեշտալուր  
 Չանձուկս իմ ,  
 Մինչեւ մոռնալ թըլիմ հազար իրք տխուր  
 Եւ ժպտիմ .....  
 Զի զուարթ կերգես , և նուագդ երբէք չողբերգեց  
 Ինձ նման ,  
 Չայնիդ ի լուր կը դադրեցնէ պահ մ'իւր հեծ  
 Երգահան :  
 Միրտս յուզեցիր , քանիցս ըզքեզ տեսնելու  
 Ըղձաց այն :  
 Եւ գիտնալ թէ ո՞ւմ ձօնես քոյդ արէլու  
 Սիրաձայն :  
 Բայց դու թաքչիս սաղարթախիտ ի սօսիս ,  
 Եւ յաճախ  
 Երբ ես ըզքեզ չեմ տեսներ՝ դու կը խօսիս  
 «Շահս , շահս , շահս» :

Արդեօք շիկնիս խնդագին երգդ երգելով ,  
 Եւ ծածկես  
 Ըզքեզ յինէն . զի այն ծաղկունք՝ ոյց գորով  
 Յուզէ զքեզ ,  
 Վաղիւ գուցէ պիտի խամրին , և քո նուագ  
 Որ այդուն  
 Զլուարթ հնչէր՝ պիտի առնու տրաու՛մ վանգ  
 Յերեկոյն :  
 Եւ ահա մօտս եկար թառիլ և կ'արձկես  
 Զայնդ ազնիւ ,  
 Որչափ փոքր ես , մեծահնչիւն ճուռողես  
 «Ճիւ , ճիւ , ճիւ» :  
 Եւ կ'ողողես քաղցրութեամբ օդն ամայի ,  
 Եւ գարնան  
 Կուտաս հողի՛ , վարդերն առանց քո ձայնի  
 Կորբանան .....  
 Իսկ դու նորէն թըռար հեռի աչերէս ,  
 Պլպուլիկ ,  
 Այսպէս ինչ որ քաղցրի՛կ սիրուն էր առ մեզ  
 Կորուսինք .....  
 Ինչո՞ւ հեռուն երբ տերեւոց տակ թաքչիս՝  
 Կ'երգես ճո՛խ ,  
 Եւ զերթ քերթոյն ազատ երգոյ՝ կը խօսիս  
 «Շո՛խ , շո՛խ , շո՛խ» :  
 Գուցէ գիտես թէ երբ վարդեր սիրարկու  
 Մեռանին ,  
 Դու վտահար պիտի փչրես թելքն ալու  
 Քո քնարին .....  
 Այսպէս քանիցս ես փչրեցի ըզլարն իմ  
 Նոճեաց տակ ,  
 Երբ վարդատիպ կոյսը իջնէին ի շիրիմ  
 Հերարձակ .....  
 Հերարձակ .....



Բայց դու , թռչնիկ , մի քաղցրիկ ձայնդ ընդհատեր ,  
 Երգէ՛ միշտ ,  
 Ծաղիկ կենաց տօ՛նն է գարուն , հոն դու լեր  
 Երածիշտ :  
 Երգէ՛ , պլպո՛ւլ , ցորչափ գարունն ունիմք դեռ  
 Եւ զիւր վարդ ,  
 Կուգայ կենաց ձմեռն ուր այս մեր ձայներ  
 Ա՛լ չեն զուարթ .....  
 Ո՛հ , քանի՛ քաղցր անուրջներ յիս կ'առուակես ,  
 Մինչ հոգիս  
 Կարծես լուղայ ի քաղցրութիւնարն պէս պէս  
 Այս կեանքիս ,  
 Եւ կը յարի նըմա սերտիւ և խորհի  
 Թէ այլ կեանք  
 Այս կեանքին չափ անուշակ և հրճուալի  
 Կը գտնանք .....  
 Եւ ժպտի իսկ պահ մը մոռնալ ա՛յն երկին  
 Ուսկից դու  
 Առաքեցար անշուշտ ունա՛յն այս կեանքին  
 Յուսատու .....  
 Երգէ՛ ուրեմն , յուսոյ թռչնի՛կ երկնառաք ,  
 Երգէ՛ դուն  
 Եւ մեղեդեօքդ երկնադաշնակ բեր նոր կեանք ,  
 Նո՛ր գարունն .....

15 Մայիս 1882

Ո Ղ Ջ Ե Ր Թ

ԱՌ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԹԵԱՆ

Կեցիր , եղբայր , և կերթաս ո՞ւր  
 Դեռ չը լած եղբօր ձայնին .....  
 Եւ նրագները քաղցրալուր  
 Հրածեշտիդ մէջ էր կը տխրին .....  
 Ի՛նչ , չէս գիտեր թէ երբ տրտում  
 Կը հեռանաս դու Բասիորէն ,  
 Եղբօրդ հոգին վիշտք անպատում  
 Իժերու պէս կը գալարեն :  
 Կեցիր , և նաւդ առագաստներ  
 Դեռ չը պարզած հողմերուն դէմ ,  
 Ինչպէս պարզին ծալք հոգւոյն մեր  
 Բուռն հոսանաց բազըին դժխեմ .....  
 Պարզեմք պահ մը մեր տրտմագին  
 Սրտից անդունդն ու խուզեմք զայն ,  
 Եւ յիշատակք՝ ամպեր մըթին՝  
 Խըռնին պահ մը մեզ յանդիման .  
 Եւ պատկերներ խնդից՝ ողբոց  
 Հոն խուռներամ գան ի հանդէս ,  
 Մեր հոգւոց մէջ ծիծաղ ու կոծ  
 Ծաւալելով և յոյզ պէս պէս .  
 Եւ նախ բոյն մը տատարակներու՝  
 Ոյց հայր և մայր հրճուին նոքօք ,  
 Ապա ի տես գայ՝ ցո՛ւրտ ուրու՝  
 Գերեզման մ'ուր հանգչին մեր ծնողք :  
 Հոս արցունքներ՝ հոն ժպիտներ  
 Կը բաժնէինք մեք միասին ,  
 Հոգիդ հոգւոյս կը խառնըւէր  
 Յաւոց՝ խնդից մէջ անմեկին :



Այս յիշատակք եղբայրութեան  
 Կը դառնացնեն մեր հեռացում .....  
 Բայց թէ յաշխարհն իսկ բացական  
 Սիրես դու զայնս, ես չեմ արտում .....  
 Ապա ողջամբ երթաս, եղբայր,  
 Ըզբեղ նաւուդ կը յանձնեմ ես  
 Արտասուազին ու վշտահար .....  
 Բաղդն այս արցունքն ալ բաժնեց մեզ :  
 Եւ երբ թռչի ծովուն վերայ՝  
 Հսկայ թռչուն՝ նաւդ ալեհերձ,  
 Յայնժամ ոգիդ թող բարձրանայ  
 Յիտէպն այն՝ զոր երազեց .  
 Նշմարելով հոն զիրական  
 Պատկեր ծովուն անծայրածիր՝  
 Որ արեւուն է լոգարան  
 Յերս և ի մուտս իւր անխտիր :  
 Եւ սիրտդ առնու ծաւալ անհուն  
 Այն ծովուն պէս՝ որ գողցես թէ  
 Գերեզման մ'է անեզր՝ որուն  
 Վերայ սլանաս դու զինչ բազէ .  
 Այլ երբ ի վեր հայեացքդ ուղղես,  
 Կարծես տեսնել զամբողջ երկին՝  
 Անծայրափակ կափարջի պէս  
 Տիրած անհուն գերեզմանին .  
 Եւ հոգիդ հոն վերասլանայ  
 Յաճախ, խնդրէ ընկզմիլ հոն՝  
 Այն երկնից մէջ, ուր գերակայ  
 Էութեան մը ձօնել պաշտօն .....  
 Իսկ գիշերայն՝ լուսինն՝ աստղունք  
 Երբ զարդարեն գմբեթն երկնից  
 Եւ պատկերեն անդ մեծաշուք՝  
 Անծիր տաճար մը լուսալից .  
 Երբ թլփայորդ գիզուին ամպեր

Ինչպէս արցունք ի բիւր կուսին,  
 Յառնեն հողմունք ամպրոպաբեր  
 Եւ ծով՝ երկին՝ համայն սարսին .  
 Երբ փոթորիկն ու շանթ գոռան  
 Եւ փրփրերախ մունչեն ալիք,  
 Մինչ նաւդ անդուլ գընայ տատան  
 Ի նիւս ալեաց՝ զերդ խաղալիք,  
 Ուր երբ յալեաց յալիս ոստնու՝  
 Գողցես ճմլէ մէն մի գլուխներ  
 Ահեղամուռնչ առիւծներու՝  
 Որ զհուսկ մունչիւն արձակեն դեռ . —  
 Խորհէ յայնժամ, եղբայր, թէ կայ  
 Այդ տարերաց՝ աղալակաց  
 Աղբիւր էակ մը մեր վերայ՝  
 Ծովուն՝ երկնից վերայ՝ Աստուած .....  
 Յիչէ յայնժամ թէ՛ քո եղբայր  
 Երիցս անցաւ յայդ մըրըրկէ,  
 Յիչէ թէ՛ նա հոս քեզ համար  
 Առ մեծ Աստուածն այն կ'աղօթէ .....  
 Թէ՛ երբ յերկիրդ հասնիս խաղաղ՝  
 Հոգիս ընդ քեզ անդ կը բերկրի,  
 Եւ թէ՛ քեզ հետ եմ միշտ ուրախ,  
 Քեզ հետ եմ միշտ երբ սիրտդ այրի .....  
 Եւ թէ երբեմն յիշես մեր մայր  
 Զոր լալագին դու ոգեցիր,  
 Յիչէ թէ հետդ է քո եղբայր  
 Հետդ է ոգւովն իւր վշտակիր .  
 Եւ ալ մի լար, լուր այս ճայնիս  
 Եւ խաղաղէ սիրտդ ամբոխեալ,  
 Եւ արձագանդն յըզէ առ իս  
 Քո հոգեշունչ նըւազացն ալ :  
 Ողջամբ երթաս, և երջանիկ  
 Ըլլաս յերկրիդ այդ բացական,



Մի արտաիր թէ գացիր մէնիկ ,  
 Մեր ոգիք քեզ կ'ընկերանան :  
 Եւ դու որ հոս քո հրաժեշտով  
 Ձը յիշեցիր իսկ քո եղբայր ,  
 Այլ ըզգացիր որբոց գորով  
 Եւ սովելոյն գուժ ունեցար ,  
 Դու , եղբայր իմ , թէ յայդ երկիր  
 Թշուառները յիշես դարձեալ ,  
 Հետդ է ոգիս , վատահ եղիր ,  
 Հետդ է , եղբայր , իմ արցունքս ալ.....  
 Ողջամբ դառնաս և երջանիկ ,  
 Եւ ցորչափ ձայնդ ըլլայ հեռու՝  
 Քո նըւազներ քաղցրաղբուցիկ  
 Պիտի խօսին մեր սրտերու .....

14 Դեկտ. 1882

**ԱՌ ԳԵՐ. Խ. Ե. ՆԱՐՊԷՅ**

**ՄԱՅՄ 15**

**Ի ԳՈՒՐՈՒՉԷՇՄԷ**

Ինչո՞ւ կամիս զի երգեմ հոս ու խորհիմ.....  
 Եւ քո ոգիդ կուտաս յօճան ոգւոյն իմ .  
 Ինչո՞ւ շնորհես զարթումն հոգւոյս թեւերուն  
 Ոյց տխրանուազ է վանդիւն .....

Եւ կամիս զի այս դարաւանդ հրճուալի  
 Ուր բընութիւն ծիծաղախիտ կը ժպտի ,  
 Ինձ ներշնչէ իտէական հրմայքն իւր  
 Եւ ժպտի քնարս ալ ախուր .....

Յափշտակութիմ , կամիս , գեղորջն այդ մարգաց  
 Յորոց գարուն իւր պատմութեանն էր հիւսած ,  
 Եւ ծառախիտ այս պուրակովն ուր բնութիւն  
 Մածկէ զխորհուրդս իւր անհուն .....

Եւ վերասլաց այդ ծառերուն վրայ հանգչին  
 Խռովեալ ոգիքս , հիանան երգով պլպուլին  
 Որ գեղգեղէ օրհնէնք երկնից՝ որ դերկիր  
 Կը նորոգէ ծաղկալիր .....

Եւ ականջեն սաղարթներու սօսափման  
 Որ մրմնջէ խորհուրդ մ'անձառ էութեան  
 Եւ ոյր ի լուր յուզեալ խոկայ մե՞ հոգին  
 Թէ ո՞ տուաւ ձայն անշունչին .....

Եւ թեւաբաց թռանին գրկել ըզգեփիււ  
 Եւ ծաղկարոյր շնչով նորին լեալ արբշիւ  
 Գնան ընդ այեր՝ գտնել զաղբիւրն այն անյայտ  
 Ուստի հոսեց հողմիկդ այդ .

Եւ անյագուրդ՝ սուզին յանհունն ի միջոց ,  
 Ուր թռչնեկաց երամներուն գնան ի ծոց  
 Հարցանել թէ՛ ուստի՞ դային սուրարչաւ  
 Եւ յո՞ գնային յօղն անբաւ .

Յառեալ ապա ընդ դրախտն անծայր երկրային  
 Որ ողորուեր էր վարդերով Մայիսին ,  
 Խոկան թէ՛ ո՞վ այդ փուռնջն անհուն՝ յեղակարծ  
 Անդնդոց եզրն էր նետած .....

Թէ ո՞վ ընդոստ այդ թաւուտներ բարձրացոյց՝  
 Ոյք գողցես թէ՛ ձգտին սլանալ գիրկն օդոց  
 Եւ շարժելով նոճեացն հսկայ գագաթներ՝  
 Գողցես պատմեն զանցեալ մեր .....

Եւ ջինջ առուին , արծաթափայլ լըճակին



կախեալ զգաւամբք հողմախաղաղ ու լըռին ,  
Խորհրդածեն , բան մը վառէ զմեր աւիւն

Եւ կ'օրհնեմք անդ ըզբնութիւն :

Կ'ընթանան հոս վտակները կարկաչուն  
Մրմնջելով աղօթանման մի հծծիւն ,  
Ոյց մեր հողին թեւածէ շուրջ՝ հարցնելով

Թէ զայդ միմունջ լարեց ո՞վ .....

Իսկ հոն հեռուն սարաւանդիս առաջի  
Եռանկիւնի տարածուած ծովն արծաթի՝  
Պատկերէ մեզ սիրտ մ'անապակ զոր բնութիւն

Բանայ երկնից թագուհւոյն՝

Որ թափէ հոն լուսավարսամ իւր շողեր՝  
Նորազարթիկ իբրու կուսան մ'արձակհեր  
Իւր մազերը լըւանալով ի ծովուն ,

Ձերդ մեր վշտերն ի լայիւն .....

Վա՛հ , և կամիս , Հա՛յր , զի սլանայ դեռ ոգիս  
Ձանհունութիւն չափել և զիւր հրաշալիս ,  
Լայնափետուր առնուլ ուրիշ թեւեր ալ՝

Այս դրախտէն վեր խոյանալ :

Բայց թեւաթափ կ'անկնիմ յայնժամ ի յերկիր  
Եւ բիւր հրմայքն իմ կը փչրին ցան և ցեր ,  
Վա՛հ , և ինչո՞ւ կամիս զի հմայքդ անուշակ

Յրուեն զհողւոյս տառապանք .

Ի՛նչ , կարծե՞ս թէ այս տեսարան սխրալի՝  
Ընդ որ աշխարհ ըսքանչացած կը բերկրի ,  
Երբ ազդէ յիս իւր հրապոյրներ ծաղկազէմ

Ես ըսփովանքն իմ գտնեմ .....

Ո՛հ գթութիւն , հողիս այրած է կանոնս ,

Կե՛ղծ իւր ժըմիտ , զի երբ աստէն յորդարուխ  
Քամէ դրածակ վարդափրթիթ՝ նոր դարնան ,

Երբ խանդ , թե՛ւ , թուիչ կ'առնու այն ,

Աւա՛ղ , դրախտիս կուշան այդ հողին կ'ողբայ դեռ ,  
Որչա՛փ մօտ են մեր արցունքն ու ժըպիտներ .....

Այս դրախտին ըով գերեզման մը կայ մոռցուած  
Վաղամեռ մօրս , ո՞վ Աստուած .....

1885

Մ Ա Ն Ի Շ Ա Կ

Ձ Օ Ն Ե Ա Լ Ա Ռ

ԱԶԳԱՆՈՒԵՐ ՀԱՅՈՒՋԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

( Ի ՊԱՐԱՀԱՆԳԻՍԻՆ )

Տխուր էի և խոնարհ՝ հանգոյն ծաղկան մանիչակիս ,  
Տխրէի՝ զի ոչինչ զըւարթացնէր զիս Ազգիս մէջ ,  
Եւ խոնարհ էի անխօս՝ զի ոչինչ Ազգս իմ առբերէր  
Մօտ իմ սրտին որ բարձրանալ անուամբ Հայուն կը խնդրէր :  
Եւ զուարթացո՛յ , և խնդացի , ո՞վ Հայուհիք , ես բարձրացայ ,  
Երբ յանկարծ ձեր անուն հնչեց այսօր ընդ հանուրս ,  
Եւ երբ ըսին թէ մեր աղքատ աղջկանց ուսման լոյսը տալու  
կը ծագիք դուք որպէս աստեղք որ կը ծաղկին մութ երկնից մէջ :  
Բերկրապատար խայտայի ես , նըման անոք ուղեւորին  
Որ բարեկամ մը կը խնդրէ օտար երկրի խուժանին մէջ ,  
Եւ գողդոջուն՝ կը հարցանէ , և կը գտնէ ուրախութեամբ  
Իւր անձկացեալ հողեհատորն , և կը գոչէ « փառք Արարչին » :



Իսկ դուք ո՛չ, չ'էք գիտեր թէ ինչ կըզգան այն հոգիք  
 Որ աղքատին և որբոյն , և մանաւանդ քնքոյչ սեռին  
 Թշուառութիւնն երբ տեսնեն՝ որչա՛փ մորմոք և գորովանք  
 Արտասուախառն ի սրտէ ունին յուզեալ և անպատում .....  
 Դուք չ'էք գիտեր , ո՛վ Հայունհիք , թէ այս ամբոխ Հայորերոյն  
 Որ կուգայ ողջունել ձեր այս հանդէսն հոգեպարար ,  
 Որչա՛փ սրտեր ունի իւր մէջ որ բերկրութեամբ կ'արտասուեն  
 Տեսներով որ Հայուն աղքատ աղջիկներն ալ սփոփուած են :  
 Այն տխուր սրտերէն մին կը բերէ զայս ձօն խոնարհ  
 Այս խոնարհ մանիչակիս , և զուարթ է նա թէ ընդունիք  
 Այս հոգեկան ծաղիկն որ երբէք պիտի չը թառամի  
 Եթէ յաւէտ սրբէք արցունքն, ու կրթէք Հայ աղջիկն աղքատ :

26 Յունիւ 1884

ԱՌ ՎԱՐՈՒՆ

Գարուն գարուն , ինչ սիրուն ես ,  
 Ծաղկահանդերձ՝ որ զերկիր  
 Ծածկես ծաղկօք բիւր ու պէս պէս ,  
 Դու զաշխարհ դրախտ դարձուցիր :  
 Դու պատկեր ես լոկ խնդութեան ,  
 Քեզ անձկայ սիրտ տրտմելոյն ,  
 Կը ցանես դու վարդ և շուշան  
 Անդնդոց եզրրն անհուն :  
 Ո՛վ դու բուրվառ մե՛ծ՝ անսահմա՛ն՝  
 Որ կը խնկես զօդն երկրի  
 Եւ տաճար մը կը դարձնես զայն՝  
 Ուր Աստուած մը կը պաշտուի :  
 Դու օրհնութեանց ես լոկ աղբիւր՝  
 Ուսկից հոսանք պաղպաջուն

Քո մեղեդեացըդ քաղցրալուր՝  
 Ի խորս հոսեն մեր հոգւոյն .  
 Ձի բիւր օրհնէնք ի վեր յերկին  
 Մեր շրթներէն կը սլանան ,  
 Երբ դու՝ հոգեակըդ երկնային  
 Առ մեզ ժպտիլ գաս միայն :  
 Եւ զեփիւռին քո քաղցրիկ շունչ  
 Գայ մեզ շնչել նորոգ կեանք ,  
 Եւ առուակաց քոց հեզ մրմուռջ  
 Խօսի մեզ նոր ըսփոփանք :

26 Ապրիլ 1884

ՄԱՅԻՍԸ Ի ՎՈՍՓՈՐ

Ողջոյն՝ մայիս , ողջոյն՝ ծիծաղդ երկնահոսան՝ վարդաթև ,  
 Որ արձակուած ընդ տիեզերս՝ հանգչիս հոգւոց մեր վերեւ.....  
 Թափթփելով գեղ ու գեղգեղ , ցօղ ու ցոլմունք ցան և ցիր  
 Ընդհանուրս ուր երանգ երանգ թեւերդ անհուն բախեցիր :  
 Ողջոյն . վաղիւ մեր Վոսփորոսն այգուն այգուն տօնէ գքեզ՝  
 Ոսկեղջիւրէն մինչեւ Զուրերն առ քեզ բացած ասպարէզ ,  
 Ուր դրասանդներ ու պըսակներ պիտի հիւսուին քեզ բրաբիոն  
 Քնքոյչ մատամբն աղջիկներուն սիրուն՝ կարմրա՛յտ գեղայօ՛ն .....  
 Ձի դու եկար մեզ՝ դէն և զարդ ըզգեցած լոկ ծաղիկներ ,  
 Եւ ծաղիեցան դաշտք ամայիք՝ միայն ցօղովդ երկնանուէր ,  
 Եւ սիգապանծ դու կը դարիս ամենուրեք ժպտահո՛ծ՝  
 Խորհելով թէ զուարթացուցիր մեր հովիտներ տրտմակո՛ծ :  
 Եւ ինչ , մայիս , դու չե՛ս պսակն երկրապարտիակ՝ ոյր կողէն  
 Կախուած ծաղիւնը՝ մեր Վոսփորին ափունքներն ալ կ'ողողեն ,  
 Դու չե՛ս միթէ՛ այն արձագանդն աշխարհալուր՝ որ թռչիս  
 Յերկրէ յերկիր , և մեզ ալ գաս սալ նոր կենաց զաւետիս :



Քեւ զուարթացան մեր պուրակներ , արտոյտն առտուն զքեզ  
 երգեց  
 Եւ զարթոյց զիս վաղ քաջ այգուն գնալ քո հովտաց զիրկն  
 անհեծ  
 Ուր սոխակներ սիրանըւազ դաշնակէիին զերգս այգուց ,  
 Այն քնարն անհուն՝ երկնադաշնակ՝ իջած ի ծոց սաղարթուց :  
 Եւ հոն հողմիկն առաւօտեան կ'որրէր թերթերն ու թուփեր ,  
 Փայտայելով այլծածան վարոքն արտերուն դալարհեր ,  
 Եւ սարեակներ հոն սուրային ծառէ ի ծառ բարձրաթուիչ՝  
 Իբրեւ իղճեր որ կը թռչտին մեր խորհրդոց ծոցը ջինջ :  
 Իսկ ես խոհուն և ըզմայլուն՝ կը հետեւիմ քեզ , մայիս ,  
 Եւ Վոսփորին մերթ ափանց մօտ , յորս այնքան զուարթ կը հայիս ,  
 Եւ դարերուն մերթ ի բարձունս հանդշած՝ ի քեզ ակընդէտ ,  
 Կըղճամ առնուլ թեւ զեփիւռէդ , և թեւ քնարիս պլպուլէդ :  
 Եւ կը խայտաս դու զուարթաթուիչ ընդ հովանեաւ ծառերուն ,  
 Ուր պար առեալ ցնծայ մանկտին՝ հընչէ փանդիւ մի թրթուուն ,  
 Ում ձայնակցին գողցես թռչունք ծառոց մէջէն ըզմայլած ,  
 Եւ որոց հետ խառնել տենչայ պըւէտն ըզձայն իւր նուազաց :  
 Եւ կը յըզես թըփոց մէջէն հողմիկը անոյ՝ վարդ արոյր՝  
 Թափառայած գգուել աղջկանց ճակատն , այտերն ու գանգուր ,  
 Եւ փափկահիւս հանդերձներուն նուրբ ծալքերը նըկարէն՝  
 Իւր մեղմաչունչ հոսանքն աղու կը հովահրեն՝ կ'որրեն :  
 Կը թռչիս դու ի թեւս ոստոց՝ յոյց դրասանդներդ հիւսեցան ,  
 Վոսփորասահ ալեաց վերայ ի ծաղկազարդ նաւակն այն  
 Որ կ'ընթանայ իբրեւ փունջ մը նետուած ծովուն ընդ երես  
 Եւ յորում սրինդ սոխակաձայն կը դայլայլէ նուազ պէս պէս :  
 Ո՛հ , այն նաւակն է մեր աւիւն՝ զոր ներշնչես մեզ՝ մայիս ,  
 Որ ընդ անհունն առնու թուիչս և դաշնակութեանց քոց ի նիւս՝  
 Փռնծա ի ձեռին՝ երգ ի բերան կը խոյանայ զուարթագէմ  
 Ուր քաղցրութիւնքդ յորդահոտան ծորեցիր մեզ դէմ առ դէմ :  
 Եւ յիսկեղջիւրն արդեօք զիարդ գեղեցկանաս դու այսօր՝  
 Յայն գեղեցիկ Քեաղըտհանէն՝ իւր հմայքներովը բոլոր ,  
 Որոյ վըտակն ականակիտ , մեծախոխոջն իւր Չաղղան ,

Դու նոր դրախտ մը կը յարդարես , բոյն սլացքներու քերթու-  
 թեան :  
 Եւ բարձրաբերձ սուեաց մէջէն կ'առուակես դու ուղիսօրէն  
 Թոյր ու թոյրեր առուին վերայ զոր թեւք հողմիդ կը բախեն ,  
 Ինչպէս ստինն մեղամաղձոտ անձկութիւններ սիրային՝  
 Եւ մէկ շընչով գորովաշարժ՝ ամբոխելով կը հմային :  
 Եւ կ'առկախիս զափամբ ջըրոցն այն հեզասահ՝ անասակ՝  
 Թոյց հայելու նայիս հարսնուկը՝ յամփիկը՝ ուռիդ հերարձակ ,  
 Կը թառիս ի փափկաթեւ հերս այն վայրաց գեղուհոյն ,  
 Եւ ի վըտակն յուշիկ նաւէ՝ գըւխը վարդիւք զարդարուն .  
 Եւ , այն դուստրն է Ոսկեղջիւրին՝ խնդամայիկ և զըւարթ ,  
 Զոր երբ կրկնէ ջըրոյն բիւրեղ ի ծոցն իւր ջինջ ու հանդարտ ,  
 Դու նուեռփարքդ անդ ցոյց կուտաս համատիպ իւր պատկերին ,  
 Եւ նման ցնորից աղու՝ տարտամ՝ նոքա միմեանց կը յարին :  
 Եւ աին ի վայր հետեւելով դալարագեղ քո քղանցիդ՝  
 Նաւազնաց՝ միտքս ի քեզ հանգչին ի գահաւանդ ծառախիտ  
 Այն հրաշալի ջուրց պաղպաջուն արքայական Հիւնքեարին ,  
 Ուր՝ ո՛վ մայիս՝ բարձրացուցիր զքո դահ վըսեմ՝ դիւթային :  
 Հոն կը պարգես ականողեաց բիւր հրապոյրները բնութեան ,  
 Եւ թաւուտներ բարձրակատար կարծես ծոցէ՛դ դուրս կու-  
 գան ,  
 Եւ դու թեւերդ անծայրափակ նոցա վրայ ալ կը սփռես  
 Եւ փուլթուլներդ ու սօսափներդ հընչեցնես հոն առ մեզ :  
 Եւ համանուազ մ'անդ յորինես նոր գեղգեղովք հեշտալուր ,  
 Ուր մեր հողիք՝ ա՛հ՝ կը դիւթուին քո հմայքներով նորանոր ,  
 Եւ մինչ գուսանն երգէ ստորեւ՝ կը լռեցընես դու զիւր ձայն ,  
 Երբ դայլայիկ թռչնոցդ հնչես՝ անմահութեան այն ծորան .  
 Հոն փառքը իշխեն բարձուստ՝ մայիս՝ դարնան դժբոյդ նազելի ,  
 Եւ երբ շարժես հողմածածան քո կատարացդ հովանի ,  
 Գողցես այն ծառք՝ արմատախիլ խնդրեն թռչիլ գհետ ամուրց՝  
 Եւ ման վըտակոծ հողուցն՝ ոյր աչք յառին երկնից միայն ի ծոց :  
 Եւ մինչ խոկմունքն իմ տարմատարմ խնդրեն հանգչիլ թեւսքըդ ,  
 Դու բիւր բոյներ ինձ մատնանիչ կ'ընես լերանցդ անդ ի կող ,



Եւ հոս խրճիթ , հոն անդաստան , կամ գառն՝ անդեայն կ  
 սփռես  
 Եւ զտիպ խոհոն սարաքային՝ ցուցնես զհովիւ զուարթերես :  
 Ո՛հ հանգիւր դու , մայիս չքնաղ , հանգիւր ամանց մեր վերայ  
 Ձի ուր որ դու կը դադարիս՝ հոն զուարթութիւն կը չողայ ,  
 Եւ քո թեւեր ծաղկափետուր երբ կը սփռես ընդհանուր՝  
 Չէս դու ժըպիտն երկնից ինկած վերայ երկրին մեր տխուր ...

30 Ապրիլ 1884

ՕՀԼԱՄՈՒՐ

### ԱՌ Պ. Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

#### ՄԱՅԻՍԻ ԳԻՇԵՐ ՄԸ

Գիշեր է , մայիս տիրեր է երկրի  
 Եւ երկնի՝ լուսին ,  
 Պայծառ է համայն , ո՛վ կը վշտակրի  
 Մէջ այս հանդիսին .....  
 Եւ զուարթ էի ես՝ անդ հանդիսատես՝  
 Ըղբե՛զ յիշեցի ,  
 Ի միասին խոկալ՝ երգել կը խրատես  
 Քարտիսիւղ ինձի :  
 Արդ ինձ հետ եկուր՝ Մուսայդ Երատով՝  
 Գաշնակել վանդիւն՝  
 Ոյր այս լուսասահ ժամուս մէջ՝ վշտով  
 Չը կրկնէ՛ գանդիւն :  
 Եկուր , զի մէնիկ երբ երգեմ ուրախ՝  
 Ակնապիչ յեթեր ,  
 Կը գողգղան իմ թեղք՝ երբ մի ախո՛ւ վախ  
 Հնչէ՛ անընթեր .....

Սուգիւմ մտախորհ ի լոյսն ովկէան  
 Անհուն կապուտին ,  
 Ընդարձակ պարզած մեր ծալքն ոգեկան  
 Որ անդ կը ձգտին :  
 Ո՛վ անհունութիւն՝ յտտակ՝ անապակ՝  
 Ուր աստղունը դեղուն ,  
 Ոյր ի ծոցն ազատ կը լուզայ լուսնակ  
 Ժպտուն՝ շողողուն ,  
 Ուր հորիզոնէ թռչիւմը հորիզոն  
 Սլացքով մը միայն  
 Եւ պայծառադէմ յափշտակուիւք հոն  
 Ընդ եթերն համայն :  
 Ո՛հ , ո՛վ է թռուցքեր այդ թռիչքն աստեղաց  
 Եւ յօդս առկախեր ,  
 Այդ գոհար բոյլերն անթիւ ո՛վ տեղաց՝  
 Յու է ցոլ ուղիսեր ,  
 Այք յաղջամղին հոսած միանգամ  
 Վառ մընացին անդ  
 Եւ խաւարասատ դրոշմեցան պատգամ  
 Տառով աղամանդ .  
 Եւ ո՛վ դըրաւ այդ լուսեղէն մատեան  
 Պարապութեան մէջ ,  
 Որոյ՝ գեր ի վեր էակ մ՝անասհման  
 Պատմեն՝ մէն մի էջ :  
 Ո՛ւր կ'երթայ լուսնակն յեթեր լող ի լող  
 Յալիս աստեղաց՝  
 Միայնակ դշխոյն այերց շող ի շող  
 Եւ մըթահալած .  
 Եւ ուստի՛ եկաւ յանկարծ գիշերոյս  
 Փայիլ ի մըթան  
 Եւ շողալ ի վայր , ի վայր ցանեւ լոյս  
 Եւ ժպտիլ բնութեան .....  
 Եւ մինչ լռութիւն և ամայութիւն



Ընդ հանուր կ'իշխէր ,  
 Խաւար անդնդոց վերայ այն գուարթուն  
 Թռած օրէն ի վեր՝  
 Կը սաւառնի միշտ անդ ի բարձունս իւր  
 Եւ ճաճանչելով  
 Կ'անցնի հեղասահ՝ տիեզերաց այն հիւր  
 Օթած իւր փայլով :  
 Ա՛հ , հասնէինք մենք ընդոստ թեւերով  
 Անոր առերի ,  
 Ուր չըկան վիհ ու վահ աղեխորով ,  
 Ուր հոգին չայրի՛ .....  
 Ուր պայծառութիւն կը յորդէ միայն  
 Եւ չը կան լալիք ,  
 Ուր բացուի արձակ հոգւոյ պողոտայն  
 Եւ չը կան սարիք .....  
 Ուր երկին մ'ամբողջ չափել կ'իշխեմք մենք  
 Ոլորտէ ոլորտ ,  
 Երկնաշափ բազկօք գրկեմք՝ պարուրեմք  
 Զանհուն մթնոլորտ .  
 Եւ ո՞վ ընդլայնեց այսչափ մեր հոգին  
 Եւ խոյացոյց զայն  
 Անբաւութեան ծոցն առկախիլ մեկին  
 Պիչ անեղբուրեան .....  
 Մինչեւ ըզգենուլ թեւս երկնատարած  
 Եւ արշաւասոյր  
 Քան զամպս ընթանալ յուղին եթերաց՝  
 Խորհրդոց ի հո՛ւր ,  
 Եւ չը յագենալ յաւէտ , տալ հորդան  
 Ըղձիցն՝ երազոց՝  
 Եւ երամ երամ արձակել անդ ցան՝  
 Զայնս այերց ի ծոց :  
 Այն բարձրութենէն՝ եկ՝ հայիմք ի վայր  
 Լուսով լուսնակին ,

Ողողուիմք շողով՝ շաղով զովարար  
 Սուսին՝ սուրակին :  
 Եւ դարէ ի դար դադարիմք ժպտուն՝  
 Ի՛ւր ցովմանցն ի տես  
 Կազդուրին մեր թռիչք մինչ եւ դեռ զար-  
 թուն  
 Յառեալ յայս հանդէս :  
 Համայնք են անդ լուռ , լուռ և թեւաւորք  
 Որ ցերեկն ողջոյն  
 Ճուռողիւն՝ նրւազ հոսեցին ատօք՝  
 Ուղիսիւք պաղպաջուն .  
 Այժմ՝ իրենց գլխիկն ընդ թեւովք ծածկեն  
 Տան հանգիստ չրթանց ,  
 Իսկ դեռ մեր հոգին թրթռացնէ զհիւսկէն  
 Թեյոցն աննախանձ .  
 Եւ խաղաղութիւն գիշերախնդիր  
 Թեւարկէ զերկրաւ ,  
 Տեղի տան ճոխն ու ոտխն անխտիր ,  
 Պրկին գիշերաւ :  
 Այլ ո՛հ դու ինձ հետ եկուր՝ խուզարկեմք  
 Մարդկային խաւեր ,  
 Զի չը կան միթէ չարութիւն ու նենգ  
 Գիշերոյս ի ստուեր :  
 Ի՛նչ , չը կան միթէ աղմկալի տրոփիւնք  
 Խուլեալ սրտերու ,  
 Որ հանդարտութեանս այս են անմասունք  
 Զո՛ւրկ նինջէն աղու :  
 Վահ , չը կան խեղճեր որ հսկեն նօթի  
 Մեծատան ի դրան ,  
 Յորում երջանիկն ըզբազած խնդի՛  
 Մոռցաւ տալ փշրան .....  
 Եւ այս դրախտանման տեսարան երկրի՛  
 Ոյր երկինն է լ՛յս ,



Լո՛յս մակերեւոյթն ուր հողին բերկրի  
 Թեւած յամեն կոյս .  
 Ուր խնծիղք՝ խրախճանք հաճոյք և հրճուանք  
 Յապարանս հոսին ,  
 Եւ կայթ ու կայտիռ արծարծեն տարփանք  
 Նըւայտոտ ու սին .  
 Ուր այն քաղցրութիւնք ծորեն վէտ ի վէտ  
 Յաչս անողորմին  
 Որ շոայլէ գանձեր՝ մինչ լումայ մը զէտ  
 Աղքատին բաժին .  
 Ուր ծոփն ըստածած շրդարչ մ'երկնային  
 Կասոյ՛յտ պլպլուռն՝  
 Կը ցոլայ փայլ փայլ՝ յոր պըւցեալ հմային  
 Մեր աչերն անքուն .  
 Է՛հ, չը խոկանք հոն թէ այս դրախտ-երկիր  
 Արդեօք քանիններ  
 Իւր խորչերուն մէջ ունի սըգակիր  
 Ոգիք վշտամբեր .  
 Քանի՛ որբ՝ այրի՛ որոց սիրտ կայրի  
 Գիշեր և ցերեկ ,  
 Ոյց չ'այցեց գարուն և լուսնակ մարի  
 Աչացն անձկաբեկ .  
 Քանի՛ կարօտներ՝ ծերուկք ու մանկուանք  
 Արդեօք դեռ կուլան  
 Իլուր այն բամբռան ոյր սլանան վանդիւնք  
 Տունէն մեծատան :  
 Սակայն ո՞վ վառեց այսպէս մեր հողին  
 Մշտափսն փարոս՝  
 Որ կանգնած յափուռնս այս ովկէանին՝  
 Հըսկէ լուսահոս .  
 Եւ երբ նըշոյլներ կը տեղայ երկին  
 Եւ ժպտի երկիր ,  
 Նա իւր հայեցուած կը դարձնէ կրկին

Նիրմանց անյարիր .....  
 Եւ կ'արտասուէ հոն՝ լոյս կայլակներով ,  
 Մորմոքի՛ որբոյն ,  
 Եւ թշուառութեան ծոցն հեղու գորով ,  
 Անդ ոլրէ զիւր բոյն .  
 Ո՞վ..... այն որ զերկին դըրաւ լուսազգեաց  
 Մութ վըհից վերեւ ,  
 Հիքին՝ անոքին՝ թաղծալից հողեաց՝  
 Գորով լուսաթեւ .  
 Ա՛յն որ և ի մեզ զանհունն ներշնչեց  
 Զհոգւոյն հայեցուած  
 Որ յանբանն յառի , հայի՛ յողբն՝ ի հեծ —  
 Այն ինքն է Աստուած .....

24 մայիս 1884

Վ.ԵՐՋ ԳԱՐՈՒՆԻՆ





(ՀՆԳԵԱԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԲ)

(ՎԻՔԹՕՌ ՀԻՒԿՕ)

ՈՍՏԻՆ ՎՐԱՅ

Ձի փոյթ թէ՛ կեանքն որ չեն՝ հաւասար որերոյ՝  
 Ա՛յր ըլլայ՝ կամ թէ կին ,  
 Խոռատին՝ և ընդ ոտիւքդ ըլլան կազմ փշրելոյ ,  
 Ձունի՛ք դուք ձեր հոգին :  
 Ձեր հոգին՝ որ իսկոյն խոյս պիտի տայ գուցէ ,  
 Այլ՛ւր , սո՛ւրբ աշխարհներ ,  
 Եւ մեր այս ցաւերէն՝ և այս տրտունջներէ  
 Ձձեզ տանի հեռուներ :  
 Եղէք այն թռչնոյ նման՝ զիւրաբեկ ոստոց վրայ  
 Դադարած վայրիկ մի ,  
 Որ կըզգայ՝ թէ կ'հակի իւր ճիւղն՝ այլ կ'երգէ նա ,  
 Գիտէ՛ թէ թռիչք ունի :

(ՎԻՔԹՕՌ ՀԻՒԿՕ)

ՄՈՎՍԷՍ Ի ՄԿԱՆՈՒՆՍ ՆԵՂՈՍԻ

«Եւ իջեալ դուստրն Փարաւոնի յուսնալ ի գետն, և նստիւք նորա շրջին առ գետոջն :»

(Եղեց ԳԼ Բ.)

« Բորք իմ, ջուրն է զովագին յանդրանիկ շողս արեւուն ,  
 Եկայք , յիւրում ի հիւլի արտհունձն հանգչի խաղաղուն ,  
 Դեռ գետափն է ամացի ,  
 Ահա այն ինչ և Մէմփիս զաղմուկ բառնայ խաւնարձակ ,  
 Եւ ընդ անմեղուկ մեր հրճուանս յայս թանձրախիտ ի պուրակ՝  
 Միայն արչալոյսըն հայի :  
 « Ի պալատան հօր իմոյ արուեստք համայնք փողփողեն ,  
 Այլ ծաղկաւէտ ափունքս այս ըզնայեացս իմ հրապուրեն  
 Քան զտաշտն ոսկի կամ պորփիւր .  
 Եւ օղանուագ գեղգեղանքդ են սիրելի դաշնակք ինձ ,  
 Քան զխունկ ծխեալ ի դահլիճս ինձ հաճոյ է զմուսալից  
 Շունչ զեփիւռփին քաղցրարոյր :  
 « Եկայք , զիւրդ խաղաղ է վտակն և երկին զիւրդ յըստակ ,  
 Թողէք ծըփալ ի վերայ մացառացըդ՝ կասրուտակ  
 Մալք թափանցիկ ձեր գօտեաց .  
 Արձակեցէք զիմ պրսակ և զծածկոյթս այս նախանձու ,  
 Ձի կամիմ ես կատակել այսօր ընդ ձեզ խաղարկու  
 Ի կարկաչուն ծոց ալեաց :  
 « Օ՛ն փութացուք ..... այլ զինչ այդ ընդ շամանդալըս այգուն  
 Բնդնձարեմ, հեռաստանն հայեցարո՛ւք ընդ հօրիզօն .....  
 Մի՛ երկնչիք՝ կոյսք վեհերք ,



Բուն մի անշուշտ հինաւորաց արմաւենւոյ՝ գետատար  
լեալ ընդ ծովս և ի խորոց անապատից՝ այցարար

Պիրամիդացն է՝ նորեկ :

« Բայց զի՞նչ խօսիմ, թէ աչացս հաւատացից՝ անըստոյդ ,  
Դա է նաւակըն Հերմեսայ , կամ Իսխրի է դա կոնք ,

Զոր մեղմազին սիւք վարէ :

Այլ ո՛չ , մակոյկ մի է դա՝ յորում ի քաղցր հանդստեան  
Մանկիկ մի ո՛հ տեսանեմ , ի ծփանաց ծոց ննջէ այն՝

Իբրու ի ծոց մօր ննջէ :

« Նիրհէ նա , և ի բացուսա դիտեալ զխաղտին իւր ծրփին ,  
Գողցես նաւէ ընդ երեքուն մըկանունըս վըտակին

Բոյնն ըսպիտակ աղաւնուոյ :

Ի մանկական խանձարուրն հողմավար նա թափառի ,  
Ծըփէ վայն ջուրն , ննջէ նա , և որորել վայն թըփ

Յիւր տապան՝ վիհն անդնդոյ :

« Զարթնո՛ւ նա , ո՛ն փութացէք առ նա , Մէմիեայ աղջըրուհի  
Ճըջէ՛ նա ..... ո՛հ , յանձն առնել կարաց ո՞ր մայր զիւր մանուկ

Հաճոյիցըն դու ալեաց :

Կարկառէ՛ նա զծըղիս իւր , ջուրք ամենուստ որոտան ,  
Ընդդէմ մահու ապաւէն ունի միայն զորորան

Ի դիւրաբեկ եղեգանց :

« Փրկեսցո՛ւք վայն ..... դա որդի Իսրայէլի է գուցէ ,  
Հայրն իմ ջնջէ զգոսա , ո՛հ , հայրն իմ անդուլթ յոյժ յոյժ է՝

Զանմեղութիւն ջնջէ նա :

Ո՛վ հէք մանկիկ , աղէտք իւր ո՛հ յուզեցին ի սէր զիս ,  
Կամիմ լինել մայր գըմա , և պարտեսցի զկեանս առ իս՝

Թէ զծնունդն ինձ ոչ պարտի դա : »

Այսպէս Խիլոս բարբառէր , յոյսն արքայի միահեծան ,  
Մինչ առ եզերք Նեղոսի այն ուղեւորն անտիական

Գնայր ի հոսանքս նորուն :

Եւ գեղավիթիթ այն աղջկունք՝ զորովք ինքըն զանցանէր ,  
Երբ Արքայից գուստրն ի բաց զոսկեհուն քօղս իւր դընէր ,

Կարծէին դո՛ւստըր Գետոյն :

Փափկամարմին ընդ ոտիւքն իւրովք վըտակըն դողայ ,  
Չողդոջայ ինքն , այլ գորովն իւր ընդ մանկիկըն որ լայ ,

Առաջնորդէ իւր քայլից :

Եւ գրեամբ անէ վայն մակոյկ , բեռամբդ ազնիւ սիդապանձ՝  
Հոարտութիւն առաջին ի ճակատն իւր լուսազգած

Թուէր՝ պատկասին յարակից :

Վաղվազակի զգեան հերձեալ , զեղէգունըս ջախջախէ ,  
Գնայ հեղասահ և դմանկիկն ի ջրոց փրկեալ վերածէ

Ի տամի աւազըն եղեր :

Անդ քորք նորս ի ճակատն երախային մի զլինի միոյն՝  
Տային համբոյրս երկիւղածս՝ աչաց նորին ըզմայլուն

Յառեալ ի ժմիա և ի սէր :

Փութա՛ , դո՛ւ որ ի բացուստ՝ զահի հարեալ ցաւագին  
Իճտակն ըզհետ ունէիր մանկանդ՝ հսկէր յոր երկին ,

Ե՛կ այսր որպէս կին օտար :

Մի զանդիտեր , զրկապինդ ըզՄովսէս մինչ առնիցես ,  
Արտասուք քո և յուզմունք ոչ պատրելոց են ըզբեղ ,

Քանզի Խիլոս չէ՛ դեռ մայր :

Յայնժամ , մինչ կոյսն յաղթական քայլիւ՝ ուրախ՝ երջանիկ՝  
Առբերէր առ մոլեզին Արքայն զխոնարհն ըզմանկիկ

Յարտասուս մօր թաթաւուն ,

« Բարձուստ հնչէին ձայնք հրեշտակացըն խմբից՝  
Թեւաքօղ առաջի Տեառն յաստղազարդ մէջ երկնից

Նըւագէին քնարս անհուն :

Մի եւս հեծեր , ո՛վ Յակովբ , նժդեհհուլթեան ի յերկրին ,  
Ի՛ն եւս հոսեր զարտասուս ի պիղծ հոսանս Նեղոսին ,

Բանայ քեզ զափն Յորդանան :

Երձենայ հուսկ օրն յորում ի խոստացեալ վայր դաշտաց՝  
Տեսցէ Գեսէմ ըզգաղթել ընդդէմ կամաց թշնամեաց՝

Յեզիցն երկար գերութեան :

Զեղեցեալ զմանկան կերպարան՝ լքեալ յախարն Նեղեայ ,  
Նարեալն է դա Մինայի , պատուհասիցն այն արքայ ,

Զոր կոյս փրկէ ի ջրոցն այն :



Մահկանացուք , որ վեսքդ էք և ուրանայք իսկ զԱնմահ ,  
Տեղի տուք արդ , զԽորայել փրկէ որրան մի , զաշխարհ  
Փրկելոց է մի որրան :

Փետր. 1820

(ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ)

ԱՌ ՏԻՎԻՆ Ժ. Ծ.

Տէրն իւր գերեոյն իրակառար իշխողն է .  
« Հերիք կրտէ տէրն առ յուզեալն ովկէան ,  
Եւ ահաբեկ՝ ովկէան զիւր բաշն իջեցնէ ,  
Որպէս հըլու առիւծ որ յիւր այր մտնէ ,  
Եւ ի մի ձայն ժողովէ զալիս ցիր և ցան :

Արեւն առ դաշտս՝ որ տապովն իւր են բեղուն ,  
Կրտէ «Թող հունձ սիրտէ ձեր վրայ զծածկոց իւր»  
Եւ հունձ զխարտեաչ իւր գլուխը ցոյց տայ իսկոյն ,  
Ուր՝ երբ հակէ զգլուխն հողմն՝ ալւոյ մի հանգոյն՝  
Կորնչին ծաղկունք անդ հասկերու մէջը բիւր :  
Երբ արշալոյս մեկնի՝ պատուէր տայ մարդին  
Ծաղկունք սիրտել՝ ցանել մարգրիտ խոտին վրայ ,  
Եւ զխոտ ծաղկած կը գտնէ այն ի դարձին . —  
Դուք ալ ըսիք ինձ ձեր ձայնով սիրային՝  
«Շուտ շինեցէք այդ տրամն ինձի » այն ահա :

(L'ALCHIMISTE)

( ՀԵՂԻՆԱԿ ՅՐԱՆՍԱՅԻ )

Ջ Ա Ն Գ Ա Կ Ն Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն

Ո՛վ դու զանգակ երեկոյեան , նու՛սգ փախուկ ,  
Մէնիկ ի ծոց խաղաղութեան պուրակաց՝  
Ե՛ս լոկ լըսեմ՝ մամուխն վերայ մինչ նստուկ ,  
Շարականին՝ զոր ձայնդ երգէ ողբասաց :  
Ո՛վ դու զանգակ , որքան լըսել քեզ սիրեմ ,  
Միրտ օրօրող ո՛վ դու դիւթիչ դաշնակիկ ,  
Քեզ լոկ լըսել , ո՛վ արձագանգ քաղցր ու մեղմ ,  
Եւ վերածնի անցեալս ողջոյն յիւր ծաղիկ :  
Ձի դո՛ւ գիտես որ մենք այս տեղ շարունակ  
Գայինք երկուքս ոտտերուն տակ նստելու ,  
Մինչ ես առած ձեռքս իւր ձեռներն ըսպիտակ՝  
Նէ երազէր , երեկոյեան զանգակ դու :  
Այլ ո՛հ այսօր պուրակն եղած ամայի՝  
Տեսնէ զի՛ւ միայն , ո՛վ հեշտալուր շարական ,  
Մինչ ես կը լսեմ որ դու կուրաս աստ յերկրի ,  
Նէ երկնից մէջ քու երգելուդ կը լսէ զձայն :


( ՀԵՂԻՆԱԿ ՌՈՒՄԱՆԱՅԻ )

Ե Ր Գ Ռ Ո Ւ Մ Ա Ն Ա Կ Ա Ն

Առէք չողեր արեգակէն՝  
Հիւսեցէք իւր մազերը ,  
Եւ լուսափթիթ հոյլ աստղերէն  
Գծեցէք իւր աչերը .  
Արշալուսէն առէք գոյներ ,  
Գոյներ վարդէն՝ չուշանէն ,



Նկարեցէք դէմք և շրթներ՝  
 Բազուկ և ծոց նոցանէն .  
 Կերպնում որ չէք կարող բնաւին  
 Հիւսել չքնաղ տեսիլ մի  
 Նըման նէրա կերպարանքին՝  
 Հրեշտակին՝ զոր սիրեցի .  
 Թէ լինի տիւ և արեգակ ,  
 Լինի պայծառ մի երկինք  
 Եւ լուսավարսամ ճառագայթք ,  
 Իմ հրեշտակս յոյժ գեղեցիկ :  
 Քու սէրէդ չեմ ուզեր երբէք  
 Բաժնըւիլ , ո՛հ , յերազի՝  
 Յարթնութեան և ամենուրեք  
 Չքեզ տեսնեմ յամենայնի :  
 Իբրեւ յիմար յաշխարհ վազեմ  
 Այրած սրտով վշտակէզ ,  
 Ի քէն՝ ո՛ կոյս՝ փախչիլ կուզեմ՝  
 Բայց չե՛մ կրնար մոռնալ գքեզ :



**Ա Շ Ո Ւ Ն**

**Ա Ր Տ Օ Ս Ր Ն Ի Մ**

Եւ գարուն թառամէր , թօթափէիս թերթք իւր վարդի ,  
 Ես թըփոց առուն վըճիտ՝ ընթանայի պղտորածուփ ,  
 Մէնիկ սահեալ ի պուրակին՝ ուր սոխակն իմ ոչ ևս երգէր  
 Ըզմայլըն ընդ բիւրեղն իմ՝ երգակիցն իմ կարկաչանաց .  
 Ոչ եւս յիմ պաղպաջուն ծոց հայէին ծիծաղածմիտ  
 Շուշան , շահպրակ և շահոքրամ , և շաղ և շող երկնային  
 Ոչ եւս յիս ցոլային՝ ընդ վարդենեացն հովանեալ ,  
 Եւ սիրտ իմ արծաթի և անապակ՝ լուսնոյն հանդէպ՝

Ոչ եւս ի փայլ նորին շողայր՝ ոչ եւս ըզլոյս կրկնէր նորին ,  
 Եւ աւանդ , գեփիւռն իմ ոչ եւս զհողին իմ գայր որբել :  
 Տերեւախառն ընթանայի՝ խոխոջելով տրտմաթախիծ ,  
 Թանաղով ըզհողակոյտս՝ ուր թափէին մէն մի տերեւք ,  
 Չի հողմն աշնանային ըզջինջ վրտակս իմ պղտորէր՝  
 Թերթաթափ առնելով ըզմանիշակն իսկ գլխիկոր ,  
 Եւ յուզէր պիս , և խոռովէի ես հոսանօք ջերաջերմ  
 Ողողելով ըզքնար սիրոյ զոր լարեցին աղու աչկունք .....  
 Գարունն էանց , ոչ եւս է , անցին իւր բոյր , թոյր և հրապոյր  
 Եւ թողին որք ըզգուսանն՝ որ ականջէր գեզգեղանաց .  
 Չի նորափիթիթ ծիլք և ծաղիկք անկան հիւժեալ և նուաղուն  
 Եւ քնարն իմ հեծէր յափուենս արտասուազի՛ն գերեզմանաց :

**ԱՌ ՎԱՂԱՄԵՌԻԿՆ**

**ՄԵԼԻՔ ԻԿԻՏՊԱՇԵԱՆ**

Բաժակ մ'էր կեանքդ անուշակ  
 Բարեկամաց զուարթարար ,  
 Մեռաւ ըսին , բարեկամ ,  
 Մեռաւ ըսին քեզ համար :  
 Ժպիտներուդ այն շաղին  
 Փոխան այսօր ինչ խնդրես ,  
 Քեզ այն սրտերդ ինչ բերին ,  
 Արտօ՞ւր աղի , վիշա պէս պէս :  
 Քեզ ընդ Արփուով շատ եղան  
 Քրսաներկու գարուններ ,  
 Մըթին կենաց շողք առջի  
 Անպրօպներուն զի՞ թողեր :



Ինչ, ասրեցա՞ր, բա՛րեկամ,  
 Դու յոյս ու լոյս երբ տեսար,  
 Գորով ու սէր զքեզ տարին,  
 Հոս բոյր՝ համբոյր քեզ չըկա՞ր .....  
 Վարդին թերթեր կամ չրթներ  
 Չեղան սրտիդ խօսակից,  
 կամ մարդարտաշար բերան  
 Փակեցան դէմ քոյդ ըզճից .  
 կամ պատուհանք կո՛յս հոգւոյ  
 Քեզ չը բացան սիրովառ,  
 Թէ ծիածանք իւր յօնից  
 Չքեզ շանթեցին շանթով վառ :  
 Արդեօք կարկաչ ու աւաչ  
 Առուին՝ կուսին՝ լըռեցին,  
 Թէ եղիւսեան գիրդ գըրկի  
 Դրունք փակեցան քոյդ հայցին :  
 Իսկ թէ մահուան ցանկացար՝  
 Բարեկամներ մոռնալով,  
 Թէ ծաղկաքաղ Ուրեղեայ  
 Գետոյն զնացիր փորձ ի բով,  
 Թէ զքեզ եթեր հրապուրեց,  
 Թէ զքեզ աստղունք դիւթեցին,  
 Դուրս այս հովտէն սըլացար  
 Շիրմին ինչպէս խորանին,  
 Հողակոյտիդ շա՛ղ իջնայ  
 Ծաղկիդ ի սէր ի համբոյր,  
 Խունկ ու զըմուռ հոն ծխա՛յ՝  
 Տաճարիդ մէջ սփռել բոյր .  
 Սըգասերեւ հովանիք  
 Հովին ի մուռնչ քեզ սաղմոս,  
 Բլուր ու փապար արձագա՛նք  
 Հնչեն զերդ նոր Որփէոս .  
 Ո՛հ, զքեզ աստղունք թող գգուեն,

Գիշերց կանթեղն ա՛ն քեզ լոյս :  
 Աստեղազարդ քեզ կամար  
 Բանայ՝ փայլէ լոյս ու յոյս .  
 Քեզ մօտ վըտա՛կ խոխոջէ՛  
 Սրտիդ լինի խօսակից,  
 Բանա՛յ երկին քեզ զիւր դրախտ,  
 Ողջագուրա՛նք քոյդ տենչից .  
 Թո՛ղ նոր արիւն ու աւիւն  
 Պայծառ հոգւոյդ ծոց յորդեն,  
 Երկնից խորանք քեզ, Մելիք,  
 Երջանկութիւն կեա՛նք շնորհեն :  
 Չայս քեզ մաղթեմ, բա՛րեկամ,  
 Հասակակցիդ ընկա՛լ զուխտ,  
 Մեռա՛ւ ըսին քեզ համար,  
 Չըսին՝ յերկրի էր պանդո՛ւխտ .....

17 Նոյ. 1872

ԱՌ ՄԱՅՐՆ ԻՄ ՈՐ ՅԵՐԿԻՆ

Հողի ազնիւ՝ առաքինի  
 Իմ հոգեսուն մօր Նեկտարի .....  
 Ա. քեզ յըղեմ զայս իմ երկատղ՝  
 Համբոյր և շունչ զայն կազմեն թող .  
 Մայրիկ, բոյդ էր որդիդ Տիգրան,  
 Աէրդ ու գորով հիմ վաղ թըռան,  
 Կարօտակէզ սոցին՝ այժմիկ՝  
 Մա՛յր վաղամեռ՝ լա՛մ քենէ զիւրկ :

23 Մարտ 1872



Մ Ա Հ Մ Օ Ր Ն Ի Մ Ո Ց

Նախաստեղծին երբ յանցանացն ըզդատակնիք տայր մահու ,  
 Ընդէ՞ր Անմահն և ոչ երարձ ըզսէ՞ր՝ զգորով հէ՞ք մարդոյն ,  
 Տալ սիրելեաց ըզսիրելիս՝ Հէ՞ր դառնագոյն քան ըզմահ ,  
 Սա գործ Աջո՞յն էր գըթածին՝ ըզմահ և եթ ոչ շնորհել :  
 Ըզսիրակաթ մայրն յիւր որդւոց հընգից բարձեալ ի գրկաց՝  
 Ի նորահաս աիոց ծոցոյ՝ յորդեգորով զգուանաց ,  
 Տալ ի կապուտ յորդահոսան գետոյն՝ իբրեւ զՍիւելիայ ,  
 Ո՛ր Տէ՛ր , քան զայս զի՛նչ դառն աղէտ՝ մահու՝ սիրոյ ի տուո-  
 ղէդ :

Մընաւ մայրն իմ յերրորդ երկունարն զիս՝ զարփի՛ եցոյց ինձ ,  
 Զարթեայ ի կեանս , տեսի զաշխարհ , նա զիս կաթամբն իւր  
 զիեցոյց ,

Զցաւս ինձ ուսոյց , ըզմահ եցոյց , այլ ոչ ծանեայ ես ըզմահ ,  
 Վա՛հ , մեռա՛ւ նա , տեսի զմայրն իմ մեռեալ՝ ապա՛ զմահ ծան-  
 եայ :

1872



ԱՌ ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՈՒՇԼԵԱՆ

Տէս գիւ՛րդ գեղեցկացոյց  
 Զիս մահ , արար զիս տարփելի ...  
 Մ. ՊԵՇԻԿՈՒՇԼԵԱՆ

« Անմահին պըսակ  
 Գափնիէն հիւսէ՛ ,  
 Ծագիւունք կը խամբին ,  
 Այն միշտ կընծիւղէ » .....

Կ'երգէի՛ տխրանըւագ քնարս առ ափամբ շիրմիդ լարած ,  
 Որոյ թեւերն աղեկաուր դո՛ւ հիւսեցիր նախ , ո՛վ քերթող ,  
 Եւ կարծեցի ոգել ըզքեզ , ոգել զոգի՛դ խորհրդաւոր ,  
 Եւ դափնի մը հիւսած ի սրակ՝ կ'առկախէի ըզքո շիրմաւ .....  
 Ներեա՛ ինձ , եթէ յաւէտ յափշտակուած ընդ քո ոգի  
 Կանխեցի հրավառ սիրով ըզմահարձանդ ողջագուրել ,  
 Եւ խնդրել ըզքեզ հո՛ն՝ ուր Հէի՛ր դու մահացած ,  
 Իսո՛ւ որ խորհուրդ մ՛էիր համայն՝ հանձար մ՛ամբողջ , Պէշիկ-  
 թաշեա՛ն :

Եւ կը վշրէր թեւն իմ տաղին , և յարտասուս հեղձամղձուկ  
 Կը գեղուր սիրտս անտիական՝ մրմնջելով երգերդ երգոց .....  
 Եւ կը կանգնէր քոյդ ըստուեր խորհրդապագած և դալկաղէմ ,  
 Բարձրագիտա՛կ ճակատդ՝ ուսկից բնութիւնն յաճախ կ'առնուր  
 թեւեր ,

Կ'առնուր հոգի՛ և հրաշալեաց կ'ըլլար շքեղ հանդիսարան ,  
 Եւ ամեն ինչ կ'արթննար , կը բարբառէր քաղցրալեզու .



Ո՛ւր և դու կը յառէիր խօսուն աշխուհիք երկնածարաւ՝  
 Հոն բնութիւն կը թրթուար, և բիւր աշխիւ գեղգեղանօք  
 Պուրակասէր սոխակին և տոռակաց խոխոջներուն՝  
 Կը յօրինէր քեզ նըւագնէր քաղցրադաշնակ և սիրախօս,  
 Զորս երբ վրտեմ՝ քո նըւագաց մէջ պատմիր մեզ հոգեձայն՝  
 Կը մոռնայինք մենք ըզգարուն՝ երգողք ի լուր ըզմայլելով .  
 Եւ ծաղկասէր քո զեփիւսին՝ յԱլէմտաղըն այն գեղեցիկ,  
 Երբ սիրաշունչ թեւեղները գային գգուել մեր սրտեր,  
 Եւ մազերը շոյել կուսին, և փայտայել քո ծաղիկներ,  
 Քաղցրահնչիւն քո քնարիդ կականջէինք հոգեպարար :  
 Իսկ դու ո՛հ կ'արձակէիր թեւոցդ հնչիւն ամենուրեք,  
 Եւ հրեշտակ մը պարկեշտագեղ յերկնից յերկիր փախտական՝  
 Քո քնարիդ եզրը կուգար յաւէտ թառիլ թեւաբախ,  
 Եւ նէ ոգիքդ յափշտակէ՛ր, և նուագէիր դու տրամանո՛յշ .  
 Վա՛հ, երկնագեղ աջօք աղջիկն իւր ժըղիտներ խաբեպատիր  
 Երբ կը թափէր երգօցըդ մէջ, կը փշրէին լարերդ յաճախ,  
 Եւ գիւթեա՛լ, հրապուրեա՛լ, կը հեծէիր դու՝ ո՛վ քերթող,  
 « Զոր կենդանեաւ ինձ զըլացար՝ յետ իմ մահու տացե՛ս շը՝  
 նորհ » .....

Հարցանելով անգութ կուսին՝ որ անըսպառ ոգիքդ հիւժէր,  
 Երբ հոգեշունչ քերթութեանց նուագդ հիւսէիր մեղամաղձիկ՝  
 Դայլայլելով «պիւլիւլըներուն տրտում երգօջն ամառնային,  
 Ուր գարունդ իւր յետին թուիչքն ու թերթեր կը թափի՜փէր :  
 Ողջո՛յն քեզ, ողջո՛յն հոգւոյ, քերթողահայրդ իմ մանկութեան,  
 Խոնարհ հոգիդ՝ որ մանկանց «Նղբայր եմք մեք»ն ուսուցիր,  
 Եւ փեմ հոգիդ՝ որ ցնցեցիր մեր սրտերուն աւերակներ .....

Ո՛հ, մահն ըզքեզ գեղեցկացո՛յց, ըզքեզ ըրաւ մեզ տարիե-  
 լի՝ .....

ԱՌ ՀԱՅՐՆ ԻՄ ՄԱՀԱՄԵՐՔ

ՍԵՆՔԱՐԻՍ ՍԵԹԵԱՆ

Հա՛յր, զի՛նչ ըզքէն լըւայ ես,  
 Ոչ եւս՝ ասեն՝ դու կեցցես .....

Զխա՛րդ բերցէ սիրա զայդ լուր,  
 Սիրտ որ մաղթէ քեզ կեանք բիւր .  
 Ինձ տեսանել մի՛ լիցի

Զի քո ճակատ սառեցի,  
 Որոյ քրտանց փոխարէն՝  
 Քրտունք իմ դեռ ոչ բաւեն .  
 Ո՛հ, աչաց քոց մի՛ լիցի

Փակիլ յանայդ գիշերի,  
 Արեգակունքդ ինձ յորրան՝  
 Մինչ յայս իմ տիս ցոլացան,  
 Եւ որք դորով բղխէին,  
 Լոյս կենսաբեր՝ իմ սրտին,  
 Քեզ ոչինչ դեռ հատուցի,  
 Կեանց դու, ո՛ հայր անձկալի .  
 Կաթեցո՛ յիս ըզդորան

Բարբառոյ քո սիրական,  
 Սէ՛ր ջամբեցեր դու որդւոյդ,  
 Սէ՛ր ուսուցեր ինձ և գութ .  
 Գալարեցին մի՛ քո ձեռք՝  
 Մանուկ տիոցս օրհնաբերք,  
 Միշտ օրհնութեանդ ես անձկամ

Հաստատութեանս առ ի խնամ .  
 Այլ զի՛ է՛ այս, ո՛վ հայր իմ,  
 Այն ինչ յարբունս հասանիմ,



Եւ դու ահա խաւարես  
 Ըզզուարթ կենաց քոց հանդէս .....  
 Ասա՛, պաշտօն հօր իցէ՞  
 Ձի զկեանս աւանդ յանձնեսցէ,  
 Որդւոյն՝ որ՝ վա՛հ՝ որբացա՛ւ ,  
 Ո՞րուժեսցէ գորբոյն ցա՛ւ .....  
 1874

Ք Ն Ա Ր Ա Ն

ԾԱՂԿԱՀԱՍՍԱԿ ՊԱՏԱՆԻՈՅՆ

« Ի՞նչ է մահ... խղումն  
 անարգ հանգուցին , երկրի հոգւոյն  
 հետ անսուրբ զուգութեան կապերուն  
 և նուաստ բեռին թօթափումն  
 գերեզմանին մէջ.....»

ԼԱՍՏՐԹԻՆ

Եւ պատանւոյն՝ արեւուն մուտ յարեւմուտ  
 Հակիրճ կենաց , սրտէ՛ զրկէ կողպուտ ,  
 Անայգ գիշեր՝ ոյր թշուալորդ ի յեթեր  
 Իւր վառ աստղը կը մարէր .....  
 Եւ անյարիր քուն՝ որ երազ գէթ չ՛ունի՛  
 Երազ մ՛ոտկի՛ ծաղկի՛ փընջի գարնայնի ,  
 Յանկարծածին փոթորկի ծնունդ շանթ մ՛անչէջ՛  
 Որ կ՛ընկնի այս վըհին մէջ .....  
 Եւ արտասուք դեռ չը կրցին մարել զայն ,  
 Արախն՝ անբոյժ վէրք մ՛է բացուած՝ գերեզման.....  
 Ձքե՞զ ալ լափեց՝ ազնի՛ւ ոգի Մկրտիչ ,  
 Այդ մահաչունչ հուր ծախիչ

Եկո՛ւր , ոգի՛դ , թո՛ղ առ վայր մի քո քնարան ,  
 Քո ժպտահոծ պատկերն ինձ լոյս և մատեան՝  
 Եւ բարբառդ հեղ թրթռակ թեւ սուր իմ քնարին՝  
 Ուր ծիծաղներ կը նուաղին .....  
 Եւ թափառոտ այս փուշ տատասկ հողի վրայ՝  
 Քնարս յուսս իմ կախ՝ հասնիմ ուր մայր մի կ՛ողբայ ,  
 Ուր հարազատք հարազատ մ՛են կորուսեր  
 Եւ ուսկից դու ես պակսեր .....  
 Միթէ քա՞ղցր էր քեզ այս կեանքը ծովածուփ՝  
 Ուր ծալք սրտից թէեւ մրրկին հուպ ընդ հուպ ,  
 Սակայն ափունք՝ կղզեակք ալ կան ծաղկաւէտ՝  
 Ուր չ՛հիւսեցիր փունջ մի գէթ .  
 Ըսէ՛ , արդեօք սա ցուրտ վըհեր սիրեցի՞ր ,  
 Ուր սրտաքանց փուշք թէպէտ են լիալիր ,  
 Այլ անոնց տակ քեզ ծաղիկ մի կայր պահուած՝  
 Ձոր դու չ՛էիր դեռ գըտած .....  
 Եւ ի՛նչ , երկին մ՛որ անկայծակն ամպ չ՛ունի ,  
 Չ՛ունի մի աստղ որ վէրքի վրայ չը փայլի  
 Կամ արչալոյս մ՛որ արտասուք չըցողէ ,  
 Չ՛ունի արեւ մ՛որ չ՛այրէ .....  
 Ի՛նչ , երկիր մ՛որ իրեն դեռ սուրն ունի չափ ,  
 Բանակ՝ կշիռ , և կ՛ուռգուր դեռ արեա՛մբ  
 Եւ որոյ հունձք են դեռ մարդիկ , կը սիրե՞ս  
 Դեռ՝ այս կեանքը սեւերես :  
 Երզն աղքատին , աչկունք այրւոյն և որբոյն ,  
 Խոց միամօր զինւորին և լիճն արիւն՝  
 Սա գեղեցիկ լուսնին լուսով կ՛ողողուն ,  
 Կը սիրե՞ս դեռ զայս լուսին :  
 Ըսէ՛ , և ես փշրեմ տխուր իմ լարեր ,  
 Մօր համբուրիկն , եղբարց և քերց գորովներ  
 Քեզ բոյն չինեմ՝ ուր դադարել ցանկաս դու՛  
 Թուփերու մէջ գինչ առու :



Վա՛հ , շատ կանուխ ըզքեզ լացին , ո՛վ ոգի՛  
 Որոյ ծալքեր ծիծաղծաւոյ՝ լուսայի՛  
 Ազնի՛ւ և զի՛րգ՝ ծըւէն ծըւէն յօշեցան  
 Շիրմիդ վերեւ՝ ցիրեւցան  
 Իբրեւ ճըրագ մի նորայոյց՝ որ մարի ,  
 Իբրեւ առուակ մ՛ականակիտ՝ որ ցամբի ,  
 Իբրեւ հայեաց մի դեռածպիտ՝ թալկահար ,  
 Կամ բեկեալ թեւ յաղու քնար  
 Ես մոռնալով պահ մ՛այս հողն որ չըպիտփեր ,  
 Յառիմ յերկի՛ն՝ վշտաց յայն աստղ յուսարեր ,  
 Եւ գտնեմ հո՛ն ի ծոց անմահ քո հոգւոյդ՝  
 Ըսիտի՛ ժըմիտ՝ սրտերուդ .....

1877

Ա. Ռ. Ո. Գ. Բ. Ա. Յ. Ե. Ա. Լ. Մ. Ա. Յ. Բ. Ն. Ա. Ն. Ն. Ա.

Պ. Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Ո՛վ մայր՝ որ ոչ եւեթ էիր աստ մայր որդեծին ,  
 Ազնի՛ւ մայր՝ որ էիր՝ մայր՝ հայր և այր քոյդ որդւոց ,  
 Ո՛վ մայր որդեանոյց՝ որ ի խընամ մայրագորով  
 Գգուէիր փայփայելով զանհայր որդիս քո սրբացեալ ,  
 Եւ գոյգ հօր խընամոց՝ գայրական քիրտն ուղիսինհոս  
 Ծորելով՝ ժիր մըշակ՝ յընտանեկան քո յանդաստան ,  
 Զերբեակ քոյդ որբս ազեխորով՝ ըզնորատունկս արեակէզ  
 Ուռգէիր , տե՛ս ըզնոսին՝ զի ուռճացան արգասաւոր ,  
 Ի բուրաստան կենսածաղիկ՝ բողբոջեցին գարնանագե՛ղ ,  
 Ծաղկեցան ծիծաղախիտ և բուրբեցին անուշակ .....

Իսկ դու , ո՛հ ախո՛ս , չեւ հոտոտեալ ըզնոսին ,  
 Զեւ եւս ըզքո քրտանց քաղեալ կենսածաշակ երախայրիս՝  
 Ընդ մահուն կայծակամբ՝ վա՛հ՝ անկանխ փաստակարեկ :

Զի՛ էիր , զի՛ եղեր ..... ժըմիտ ի լաց՝ տխրեցար ,  
 Ճըրագ ի մթան՝ նուաղեցար , աստղ ի մրկի խաւարեցար ,  
 Ի ծովու ալետանը՝ էիր կզգեակ երանաւէտ՝  
 Ծածկեցար յականողեաց , և եղեմ մի սիրատունկ՝  
 Որ բոցեղէն սըրով մահուն անջատեցար յորդեկաց քոց .....

Այլ զի՛նչ , թագունհի՛դ Աղկիոնէ՛ յո՞ սլացար  
 Ընդ կենաց արշալոյսն , յեզըր ծովուն գերեզմանա՞ց ,  
 Եւ յալիս փրփրերախ՝ զո՞ կամեցար ողջագուրել ,  
 Ըզթագաւո՞ր քո ծովահեղձ՝ ըզպըսակեալ քո նարօտիւ .....

Ընդ ում առեալ ըզկերպ թու՛նոյ՝ թըռեայք յալի՞ս զընել ըզբո՛յն.....  
 Այլ զի՛նչ քաղցրիկ դադարք ձեզ՝ քան զորդեկաց զիրկ և սէր ,  
 Եւ ըզմայրիկ տեսանել՝ հասակագեղ՝ եռանդուն՝  
 Զաղածրի մանկունս երիս՝ զոյց դեռ յիշես ըզխանճարուր՝  
 Ուստի հանեալ ըզնոսին՝ երգ ի բերան եղեր յորրան ,  
 Եւ զմայրիկ՝ գորովիլ , գիրկս արկանել սիրահամբոյր՝  
 Ընդ որդիս հոգեծաղիկ և բարբառիլ քաղցրապտուղ .  
 Զի՞ սպա քաղցրագոյն դադարք քան զայս՝ ծընօղիդ ,  
 Զի՞ այլ անքոյթ յթեւան , միթէ՛ ալի՞ք մըրըրկածուփք .....

Մոռացա՞ր ըզգաւակունս և զգիրկ նոցին և ըզսէր՝  
 Կամ առ ի մոռանալ՝ արբե՞ր արդեօք ի Վեթեայ :  
 Այլ նոքա գքեզ ոչ մոռացան , ըզքեզ խնդրեն , քեզ անձկան ,  
 «Զիք ինչ կարող փոխանակել ըզմայրագութ աղեաց գորով» .....

Ո՛չ լրեսս զայս Աւաջ լալահառաչ քո որդւոյն ,  
 Ոյր ի փանդիւն արծաթալար՝ ո՛հ էջ անշուշտ դադարել՝  
 Թեւաբախ հանդչել , ի լուր մայրախնդիր վանդիցն աղու  
 Ըզքանչանալ՝ խանդաղատել՝ հրեշտակային քո ոգի .....

Լոկ յետ մահու գեղեցկացեալք՝ միայն կեանքն են քերթողա-  
 կանք .....

Իսկ մահ ըզքեզ խաւարեցոյց , կապտեաց ըզգեղ քո լուսարեր ,  
 Զոր խնդրեն , ում անձկան և արտասուեն քոյդ հարապառք :  
 Ո՛հ , ասա՛ , առաքինի՛դ , միթէ՛ այլուր բեզ մընայր գեղ  
 Վըսեմագոյն քան զայս գեղ սրտի՛ սիրոյ՝ գորովոյ ,  
 Միթէ՛ յաստեաց տարակայեալ՝ զանձուկս ոգւոյ քո լընուցո՞ւս ,



Միթէ այլուր գըտանիցե՞ս ըզկորուսեալ հատորս հոգւոյ ,  
կամ արդեօք անձո՞ւկ եղեւ երկիր սրտի քում անպարկիակ ,  
Արդեօք տատասկըք խիտ առ խիտ ի ծուէնս ի ծուէնս յօշատեցի՞ն  
Ըզփափուկ սրտի քո ծալս՝ այնքան զըթո՞յ՝ սիրոյ զաղիս ,  
կամ արդեօք քարրըք թունարկուք՝ որ ի սրտից սողին վերայ ,  
Վիրեցի՞ն աստ ի վիշտս ի վիշտս ըզքե՞զ՝ որ ոչ զօք վիրեցեր .

Ա՞յլ երկին , ա՞յլ աստեղունք , ա՞յլ սէր , ա՞յլ լոյս զբտեր արդեօք  
Ոյք զերկիր քեզ մոռացուցին՝ յանեզր՝ յանքոյթ իւրեանց ի ծոց ,  
Եւ զքոյդ աչկունս ընդ երկար սեւեռելով ընդ եթերն այն՝  
Հուսկ ի շիրիմ թօթափեցեր զվաստակաբեկ մարմնոյ քո բեռն ,  
Ուստ անջատեալ զանմահ քո տարր՝ զայն ընդ անհունն արձա  
կեցեր ,

Եւ յանհուն Աշխարհիդ շի՛ք քեզ տատասկ՝ վիշտ և վէ՛ր .....  
Ա՛նդ ասպ հանդիր , ոգի՛դ , ուր նոր Արեւ ճաճանչաւուխտ  
Շողայ անշուշտ անմո՛ւտ , նոր կեանս անմեռ անշուշտ ժառանգ  
գեցեր .

Միթէ երբեք մոռանայցե՞ս անդ զհարազատս և զմտերիմս  
Որ զսիրտ՝ ըզսէր և զձայն յըղեն քեզ անդր յերկին՝ իրր աղօ՛թք.....

12 Յունվար 1878

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Գ Ո Ր Ո Վ Ո Յ Ն

Բ Ժ Ի Շ Կ Մ Է Զ Պ Ո Ւ Բ Ե Ա Ն Ն Ե Բ Ս Ի Ս Ի

Ինձ յար թախիժ հիւսես բաժին , ինձ ողբ լարես , Մեղումենէ՛  
Ա՛նդ հոգի իմ ձայնէ , աւա՛ղ , ուր արիւնէ Ատրոսէ .....  
Շնորհս , ո՛վ զշխոյ , շնորհս ինձ արա՛ եթէ յալուցս անդնդոցս  
Գնամ առ խարխափ , խոր՝ խաւար է և փըշաբեր ափափայս ,  
Խոր՝ խաւար է այս ափափայ՝ անդունդ ողբոց և արտասուաց  
Եւ զի՛նչ , իշխե՞մ ես անդր հորդել , շնորհս արա՛ ո՛հ ինձ օգնել  
Քանզի մեռաւ Մէղալուրեան , լացին սիրտք մեր և ապառաժք  
Լացին մարդիկ և բնութիւն , լացին հանճար և գիտութիւն .

Տե՛ս , ո՛վ Մուսա , արտասուք զեղուն ի սիրտս աղեխորով ,  
Մորմարին սիրելիք , խանդաղատին օտարտախք ,  
Վա՛հ՝ այրին այրի անշէջ , ողբայ՝ աւա՛ղ որբ մանկտին ,  
Շիջանի նոցին արեւ , ոչ ևս ունի այդ զիւր ժըմիտ ,  
Եւ ոչ ցայգ զիւր ցօլմունս , ոչինչ ժըմտի , ոչինչ ցօլայ ,  
Խոր՝ խաւար է այս ափափայ՝ անարեղակն և անժըմիտ .

.....  
« Ըե՛ղ , Տէ՛ր , զանըստառ երջանկութեան ցօլս յայս եղեմ » :  
Քանիցս այսպէս ըզձախիր սիրտ իմ կարդայր զերկնից ըզգութ ,  
Ըզտրամալարն իւր փանդիւռ փչրել յափուսս այս խնդրելով ,  
Ձի շատ եղեւ սուգ սորին ի նսեմաստուեր խորշս անտառաց ,  
Շատ եղեւ նորին հնչիւն՝ բըւոց լինել եղերամայր ,  
Ձի ոչ զարթեան ի ձայն իւր այնքան ոգիք սիրահամբոյրք  
Եւ ոչ իսկ անդրադարձ ետուն նըմա ըսփոփական .  
Ձի շա՛տ , աւա՛ղ , պարմանիք՝ ծիծաղաղէ՛մ նըւաղէին ,  
Իրրեւ ըզսիրտ բերթողին՝ որ ի շիրմին դեռ նըլուէ .....  
Շա՛տ կուսանք անտիականք՝ վա՛հ՝ թօշնէին ժըմտահոժ ,  
Ազաւնակերպ բացխփելով զարտեւանունան հոգեծաղիկ ,  
Եւ աղանոյն իսկ հանգոյն ըզգիրգ ուլունսն հակելով ,  
Եւ քարչէին զիմ փանդիւռն ըզհետ իւրեանց մինչ ի հող ,  
Եւ անդ շատ իսկ թրթռէր այն՝ մէնիկ թողեալ յամայութեան  
Եւ որբ՝ յայն ոգեաց , ապա խուզէր ընդ շիրմաւ՝  
Չայնքան գեղոյ և շնորհաց զոգին վըսեմ հարցանելով ,  
Այլ ոչ առեալ արձագանգ՝ յըղէր աւաչս յամիս ի վեր  
Եւ բարբառէր անդ հոգւոցն՝ եթէ առ իւրսն իջցե՞ն այսրէն ,  
Եւ շատ իսկ հեծէր անդ , որբո՞ց՝ այրեաց գորովելով .....  
Ո՛հ , սիրտ իմ խնդրեաց հուսկ զայս սեաւ փանդիւռն իւր ջախ  
ջախել ,

Անձկալով զի գըբախտին երջանկութիւն գտցէ աշխարհ :  
Այլ ահա ամպք զիզանային՝ հանգոյն վրիժուց որ պայթին հուսկ ,  
Թընդայր եթեր՝ գողցես թէ յանցեալ մարդոյն մա՛հ գոռալով .  
« Խնայեա՛ Տէր » աղերսէի , « անգամ մի լոկ յանցեաւ քեզ մարդ ,  
« Իսկ դու յաւէտ պատուհասես զԱզամածիւնն հէք մարդկութիւն » .



Սաստիկադոյն որոտային ամպրոպարեր ամպը դէզադէզ՝  
Ահեղամուռնչ հողմոց ի թեւս ընդհարելով փայլահնացայտ ,  
Եւ կայծակն հուպ ընդ հուպ հարոյր զափուռնսն իմ երանեալ ,  
Եւ սիրտ իմ՝ ո՛հ՝ կըքէր՝ տեսեալ քանին լեալ շանթահար .....  
Կըքէր սիրտ իմ և հառաչն իւր՝ հընչէր՝ փանդիւղն տրտմական :

\* \*

Վահ , Մէղպուրեան , և գքե՞զ անդ լացից այսպէս աղեկտուր ,  
Ըզքե՞զ որ՝ էիր ծիծաղ՝ տխուր ժամուց հեծեծական ,  
Եւ մինչ գիշեր տրտմաւոր սփռէր զթեւս իւր սեւաթորմի  
Ջականողեօք տառապելոյն՝ ում նինչն էր գէթ խաղաղութիւն  
Երեւէիր դու անդէն՝ յուսոյ այդուն աւետաբեր .....  
Եւ գքե՞զ լացից , դու լալեաց՝ ողբոց էիր մխիթարանք ,  
Դու սպեղանի դառնութեանն էիր վիրաց յոգնաթախիծ ,  
Դու այսօր խոցս ի սրտի բանալ ժուժա՞ս անկարեկիր :  
Ո՛վ որ բնութեան ընդ բարբառս հիանայիր այնքան ուշիւ ,  
Ջեփիւռին ականջելով՝ ի սասաւիւնըն տերեւոց ,  
Որ իբր անոյշ ինչ խորհուրդ սահէր գընայր թեթեւաթուիչ ,  
Ականջելով սուլման հովուին՝ մինչ ժողովէ գգառն արօտին ,  
Հանդուռնաման ձայնին հօր՝ որ գմանկրտին խնդրէ անձկաւ ,  
Ականջելով ջուրոց ծործորին անմարդաձայն և անդորր՝  
Որ զանցելոյն քեզ թըւեն ժամուց հոտանալն պէսպէս .  
Ականջելով այդուն այդուն թուչնոց զըւարթ գեղգեղանաց՝  
Որ նոր այգ և նոր օր , նոր կեանք և յոյս դաշնակեն .....  
Դու , ո՛ Պուէտէս , կամբօս զի քեզ զիմ տրտում լարս հարից այսօր

\* \*

Ե՛կ , անձկալի՛դ , Ե՛կ , եղկելի՛դ , լո՛ւր ինձ ողբի՛դ հեղահամբոյր  
Ո՛հ , Ե՛կ առ վայր մի ի լոյս՝ հերձեալ գշիւրմին քող մթթութեան  
Ի լոյս եկ՝ զի գքեզ յաւաղել՝ կարօտ տեսոյն եմ քո զխմաց :  
Եւ իսկ և իսկ երեւիս մըտաց իմոց դուդ այսրէն ,  
Հեղահայեաց ակնարկես , և խուսափիս թափահար ,

Կա՛ց , ո՛վ ողի , քեզ կեանք ի ձահ , և ո՛չ լըւին ըստուերք մա-  
հուն ,  
Քանզի ծաղկի՛լ ծիծաղախիա , ծաւայել խունիս անոյս այգուց  
Եւ հիւծի՛լ ընդ միջօրեայն և թօթափել ըլթերթս ի հո՛ղ .....  
Կամ թռանիլ յազատն այեր , ընտրել դադարս աղիկամի ,  
Ի վտակասէր մերթ յուռենին՝ որ ըզսաղարթսն հակէ յառուս ,  
Պատկեր այրոյն հերարձակ՝ որ զարտասուսն հերօք ծածկէ .....  
Մերթ ծառախիտ ի ծոցն անդ խորհրդաւոր պուրակին՝  
Ուր անսղք որսողին մահահամբոյր ձեռն ոչ դիպաւ ,  
Եւ ոյր զանխուլ ի խորչս անդ օթեփանին բիւր խոհք հողւոյ .  
Ազատ այսպէս թռանիլ՝ դարիլ , և դգեանիլ հուսկ հա՛ւ վիրաւոր ,  
Այս յեղակարծ խոց աղէխարչ , և խոկ սորին է վի՛հ անել .....  
Կա՛ց , ո՛վ ողի , տեսի՛ց ըզքեզ , և թէ ոչ տաս ինձ անդրադարձ ,  
Գէթ ի միտս իմ հարցեալ ըզքեզ , զուղին հողիք մեր ցուցցեն մեզ :  
«Ահա դու և մանկու՛նք քո» և այն զոր դու «կոչեցեր կին»  
Դրախտի մարդոյն ի բարբառն՝ յորժամ ըղկինն յաջն իւր ըզգաց :  
Եւ չըզգա՞յ նէ՝ Արուսեակն այն՝ ըզքեզ՝ ում նէ զարեւն ածէր՝  
Աւետաւոր քաղցրիկ կենաց լուսապարգեւ առաւօտին ,  
Եւ չը խնդրե՞ն գհայրդ իւրեանց զոյգ անմեղուկ զաւակունք ,  
Որք զօրէն զոյգ աղանեկաց՝ ոյց մեկին ծնողն անդառնալի ,  
Ոչ եւս ըզքօ ծնելասէր լըսեն զվո՛ւ վո՛ւն հողերարբառ ,  
Եւ անձկան քեզ , և «հայրիկ մեր դարձցի՞ , մայրիկ» մնչեն թու-  
թով ,

Դու դառնաս ո՛չ , վահ , որբացա՛ն ի քէն Արթունն և Ջարուհին ,  
Եւ որբացա՛ւ սիրան հայրական Հարադատին քո անձկարեկ ,  
Եւ դու , աւա՛ղ , յեղակարծում լեալ ի դրախտիդ կայծակնահար՝  
Ամայանայ քոյոց գիրկին՝ յորմէ խլեցար ծաղկիկ յուսոյ .  
Այլ՝ բա՛ց մեզ բա՛ց գհողւոյ քո ծալս՝ որ ոչ անչուտ տոկան  
այսմիկ ,  
Որ ի յամբուռսն այս թոհրոհին՝ անշամանդաղ պարզին անչուտ ,  
Որ ի լեղի վտակացս յառնեն մաքրափայլեալ նորափետուր ,  
Ջի ո՞չ միթէ վտաց ի բով հողին անկէզ ոսկիանայ ,  
Եւ ո՞չ միթէ ըզվիշտն ինքնին՝ աննիւթականն ըզգայ հողին



Եւ ո՛չ նիւթն որ փշրի , ապա և վիշտն է փաստն հոգւոյն .  
 Բաց մեզ ապա զհոգւոյ քոյ թերթս և ա՛նդ ըզքեզ մեք ընթերցցուք  
 Եւ գտցուք զուղին խնդրեալ՝ որ յանձկացեալ լոյսն հանցէ զմեզ.....  
 Ո՛հ , հոգի՛դ Ներսիսի , դու ռահահորդ լուսաշաւիզ ,  
 Այսպէ՞ս և զմեր հոգիս պարզես՝ ի խաւարէս ի զնալը ի լոյս .  
 Այլ ո՛չ միթէ մորմոքեցար ի սլացս անդարձ ընդ կրուկդ յառեալ  
 Մինչ զխտեցիր ի բոյն քո հողմատատան և կիսաւեր՝  
 Զորմէ ի կախ կղկղային քոյինք՝ կծեալք և թեւաթափք ,  
 Եւ ո՛չ միթէ մորմոքանքդ իսկ՝ զոր ըսպառեալ մահն ոչ կարաց ,  
 Բացայայտեն զանմահացու և զխանդաղատ քո հոգին .....  
 Ո՛հ , այդ գորով յաշխարհի՛ աստ՝ քան թէ յայլում խնդրողս ու  
 նէր

Աստ՝ ուր անձուկն և սէր գթտին , լացն և ժրմիտ մղեն զիրեար  
 Եւ ո՛չ միթէ գքեղ երանել է ճահ , հոգի՛դ գորովասէր ,  
 Զի ի թեւոցդ անմահազգեաց՝ ցանեալ ժրմիտս ի սիրա հիբոյն ,  
 Ապա թռանիս , զի և աստ մահ մը՝ հպեցցի քոյդ յիշատակին՝  
 Որ փթթեցցի մչտազուարճ՝ ի սիրաս հիբոյն , մեր և քոյոց .....

1 Դեկտ. 1880

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ն

Անմե՛ղ էր նա , անմեղներո՛ւ առաջնորդ .....  
 Մենք լացինք զայն , ո՞վ թշուառն այն չըլացաւ .  
 Իւր մահուն գոյժ՝ շանթ մ՛էր ինկաւ հոգեզուրդ  
 Մեր սրտից խորն , ուր նա թողուց անբո՛յժ ցաւ .....  
 Մենք լացինք զայն , և մոռնայի՛նք զիւր աղէտ  
 Զոր կըրեց նա՝ զի զմեզ սիրեց մոլեգի՛ն .....  
 Եւ մոռնայի՛նք իւր հոգւոյն ձայնքն որ յաւէտ  
 Մեզի՛ համար քնարէ ի քնար թրթռացին :  
 Եւ օր մը , օ՛ր գթովբեր , նուագներն այն՝  
 Որ իւր սրտէն կը թռչէին աշխարհնե՛ր ,

Շիրմահանգոյն կամարաց տակ նուաղեցա՛ն ,  
 Եւ մեր պլպուլն հոգեխօսիկ ո՛չ եւս էր .....  
 Ո՛հ , փրկե՛նք զայն , մեր սուրակներն ամայի՛  
 Պիտի մընան՝ թէ գայլայլիկն իւր լըռէ ,  
 Եւ այն աճիւնք՝ ոյց իւր հոգին կը հայի ,  
 Առ ի զարթնուլ՝ շունչ կ'ըսպասեն դեռ իրմէ .....  
 Օ՛ն , փրկե՛նք զայն , դեռ չիթք աչաց մեր տրտում՝  
 Զը դադրեցա՛ն հոսելէ , դեռ մեր ցաւեր  
 Զամոքեցա՛ն , դեռ մեր վիրացն անպատում՝  
 Նա իւր երգօք ըսպեղանի տի բերէր .....  
 Փրկե՛նք , աղէ՛ , նա մե՛զ համար կը տանջուի .....  
 Փրկե՛նք ըզնա , իւր բոյնն անտէ՛ր տի մընայ .  
 Զոյդ ձագուկներն ակնկաւոյցք իւր դարձի՛  
 Իւրեանց մօր հետ՝ ժամէ ի ժամ մնան նըմա .....  
 Ա՛հ քանիօ՛ն արեւն իջաւ հորիզօն ,  
 Բայց չըդարձաւ նոցա հայրիկն ի բոյն իւր ,  
 Լուսինն յեթեր ըրաւ շրջան քանի՛օն ,  
 Նոքա անքուն՝ չառին այգուն ուրախ լուր :  
 Փրկե՛նք ըզնա ..... հնչէր լանջաց տակ այս ձայն ,  
 Այլ՝ վա՛հ՝ անլո՛ւր՝ անարձագա՛նդ կը մարէր .....  
 Այն կամարաց տակ կը հեծէր անմեղն այն  
 Հեռի՛ բոյնէն , հեղլով արի՛ւն արցունքներ .....  
 Արդարութի՛ւն ..... այս էր շրթանց իւր բարբառ ,  
 Եւ փրկութի՛ւն ..... աղօթք սրտին հայրական ,  
 Սընո՛ւնդ որդւոցն ..... այս հոգ մաշէր զինքն իսպառ ,  
 Եւ վա՛հ՝ մահն էր իւր երազոց ուրուական :  
 Օրհնեա՛լ ըլլան՝ ոյք կարեկից անմեղին՝  
 Գէթ իւր բոյնին ըսփոփաբեր ըրին այց .....  
 Օրհնեա՛լ ըլլան՝ ոյք շիթ մ՛արցունք խառնեցին  
 Անմեղութեան այն աղէխարշ արտասուաց .....  
 Եւ դեռ արոփէր նորա սիրտը մեր սիրով ,  
 Եւ նո՛ր սըլէտ՝ եղբայրութեան սիրահար՝  
 կը յիշէր զմեզ , կ'ուռնոյր դեռ սիրտն իբր ըզծով



Եւ փրփրերախ ալեօք սիրոյ կը ծըփար :  
 Ճանչցանք մենք զինքն . իւր հրատօշոր խանդն անհուն  
 Եղբայրութեան՝ դեռ կը վառէր անդ ի մթան .....  
 Ո՛չ , արհաւիրք նըսեմաստուեր սրմերուն՝  
 Չէին զօրէր խեղդել զաւիւն սրտին այն .....  
 Ո՛չ , այն ճաճանչ՝ որ Անհունէն կը բղխի  
 Եւ կը սպրդի ի սիրտ մարդոյն , չը՛մարիր  
 Ո՛չ որմոց տակ , ո՛չ վընից մէջ սոսկախ ,  
 Եւ շիրմէն իսկ դո՛ւրս կ'ընծիւղէ լուսալիր .....  
 Այլ վա՛հ , անմեղն ի մա՛հ պատրաստ էր արդէն .....  
 Նա ի մահիճ ցաւոց կ'ընկնէր դառնագին ,  
 Որպէս եղնիկ վիրաւորեալ յորտղէն՝  
 Վշտաչարջար ըսպառելով ուժն յետին .....  
 Անդ կը դադրէր բարբառ լեզուին աղեկէզ ,  
 Եւ ի մահճէն խորհուրդք առած թռիչս ի վեր՝  
 Թափսւէին դեռ զաչօք իւր վշտատես ,  
 Մինչ քուն անդօրր յարտեւանունսն թառէր :  
 Եւ կը ժպտէր անմեղն յայն նինջ խաղաղիկ .....  
 Գուցէ զեղբարց կ'երազէր դեռ զսէրն անհուն ,  
 Գուցէ փրկուած՝ ի գիրկ որդւոց տեսնէր զինք ,  
 Կամ նշմարէր յերկնից ժպտող զիւր զուարթուն .....  
 Յետինն էր ժամ , զի անմեղք ընդ մա՛հ ժպտին .  
 Եւ նուսդ աչերն յետին նըւազ բացխրիէր ,  
 Յետին հեծով կը փակէր զայնս եղկելի՛ն ,  
 Եւ աներազ կը ննջէր քուն այն զիչեր .....  
 Անմահ՛ ըլլայ այն անմեղին յիշատակ .  
 Նա կը բաշխէր անմեղ տիոց զողին իւր .  
 Լացաւ նա , և լացուց զմեզ իւր տառապանք .....  
 Կապրի՛ ի մեզ այն նահատակն աղեկաուր .....

ԱՌ ԹՈՎՄԱՍ ՊԵՌԵԱՆՅՑ

Ի ԴԻՄԱՑ ՄԱՆԿՏԻՈՅՆ

Կ'ըսէիր դու վշտահար՝ մուցըւեցան մեր քրտունք  
 Չոր թափեցինք անձնագիր՝ այն սպաշնորհ բեմին վրայ՝  
 Չոր Պալեանը պըսակեց՝ և ուսկից ծերք և մանկունք  
 Բարոյից լոյսն ըստացան մեր ջանքերով տասնամեայ :  
 Եւ եկար դու յուսահատ՝ այն երկրորդ բեմըն Պալեան՝  
 Ուր քահանայ մ'անձնագիր՝ զանձն իւր հօտին վրայ դըրած  
 Վաստակաբեկ՝ կը ժողվէր մանկախն յարօտ մի ուսման՝  
 Գիտնալով թէ մանկութիւն չը՛մոռնար քիրտն անձնուրաց.....  
 Ըզնոյն և դու խորհէիր՝ զի գիտէիր թէ ոսկին՝  
 Որոյ փայլը կը մարի գերեզմանին եզրը գէթ ,  
 Չըպըսակեր այն թշուառն՝ յոր գորովի մանկտին ,  
 Եւ թէ հոգին մանկական պիտի յիշէր զքեզ յաւէ՛տ :  
 Եւ խոյտացիր դու սիրով՝ մեր սէրն ընդ քեզ տեսնելով ,  
 Գուրդուրացիր մեր վերայ՝ երկրորդ հովիւդ այն խաչանց  
 Որ ժողովեալ այսօր շուրջ ըզք՝ շիրմաւ՝ արցունքով  
 Կարեմք միայն քեզ յայտնել թէ մնաս ի մեզ անմոռաց :  
 Երթաս բարեա՛ւ . եթէ դու չըբաղեցիր խայրիքներ  
 Որոց մնայիր յորդեռանդն՝ երբոր անձկաւ դիտեցիր  
 Չի ըսկանք ոլորել մեր խոստացած պտակներ ,  
 Մի՛ վշտագնիր , անմա՛հ է ի մեզ հոգիդ սիրալիր :



ԱՌ Պ Ա Ա

ՕՐԻՈՐԴ ԱՐՈՒՍԵԱԿ ՇԻՏՄԱՆԵԱՆ


ԵՒ ԻՒՐ ՄԱՀՆ

Աւետարներն այն մեր այգուց՝ այն Արուսեակն ալ շիջաւ  
 Երբ դեռ նոր նուաղեր էր իւր սիրակցորդն այն աստղիկ՝  
 Այն Տիրուհին որ նախ տիրեց Քերթով հողույ գորովանաց .....  
 Որոյ սիրով ցոլացաւ ..... և շեղաւ սրբն ապերջանիկ .....  
 Լըռեցուց ըզվանդիւնն անոր քնարին տարահնչիւն ,  
 Ոլորեց բոյնն աստեղաց մէջ և իւր ցորումն հոն ցանելով՝  
 Հուսկ հիւժեալ նուաղեցաւ այն քընարին թելոց վերայ .....  
 Եւ շիջաւ , բարեկամ , այն Արուսեակն ալ այգաբեր .....  
 Նոքա քոյրեր էին սրտիւ , մտերմուհիք շուշանագեղ՝  
 Որ համափթիթ կը փայլէին ընկերելով ամենուրեք ,  
 Վա՛հ , գարունն նոր ծաղկեցաւ և ցանկացոյց ըզմեզ ապրիլ ,  
 Մեռան նոքա , բարեկամ , և Արուսեակն ալ շիջաւ :  
 Գիտես քանիցս ըզմայլեցանք յուշով նէրա բարբառներուն ,  
 Եւ կ'ըսէինք միմեանց՝ քանի ձիւղերն էին շնորհափայլ ,  
 Պերճաբոսն այն աղջիկ , իմաստնուհին ծաղկահասակ ,  
 Որում լըսել մենք ուշիւ և պատկառով ըսքանչացանք :  
 Եւ լըռեց նէ այժմ իսպառ , վա՛յ ծընողացն յողնաթախիծ ,  
 Եւ վա՛յ մեզ ալ , բարեկամ , զի յամեն ինչ որ ըզմայլինք՝  
 Կը կորնչին տարածամ և կը թողուն զմեզ անձկարեկ :  
 Եւ ինչո՞ւ խաբուիմք յաւէտ՝ դէտակն յառեալ ընդ հանուր ,  
 Սա ծաղկաւէտ նոր Եղեմին , սա աղաւնեաց փափկամարմին ,  
 Սա ցոլացման վերջալուսոյն , սա վառ գեղոյն երկնային ,  
 Եթէ զիտեմք թէ սոքա պիտի նուաղին ետ զետէ .  
 Ինչո՞ւ խաբուիմք յափշտակուած գարնանաշունչ սա մեղեդեօք  
 Որ կը թռչին ի թեւս հողմին , ջրոյն , թռչնոյն և տերեւոց ,  
 Եւ գորովով անտիական կուսին՝ որ զմայրն ըսփոփէ՝

Երբ կայրի՛ այրին այն ..... և երգով մօրն՝ որ կորորէ .....  
 Ինչո՞ւ ..... եթէ սոքա ամեն պիտի լըռեն հուս ընդ հուս :  
 Ո՛հ , տային ինձ զօրութիւն՝ նորոգ կանգնել զայն հասակ  
 Որ ծաղկաղէմ կ'անկանի ..... ինչպէս նորոգ հասնի գարուն ,  
 Եւ տալ շունչ անմեղ շրթանց՝ որ կարկամին ..... ինչպէս նորոգ  
 Պիտի զարթնուն և հնչեն սա թռչնեկաց դայլայլիկներ ,  
 Եւ տալ անհուն կեանք այն սրտին՝ որ շունչ զիւրեւ լոյս կար-  
 ձակէ՝  
 Լոյս գեղոյ և գորովանաց ..... ինչպէս յաւէտ կայրի բնութիւն-  
 Իսկ կեանքն՝ աւա՛ղ՝ անբաղդ մարդոյն կը շիջանի յերկրի իսպառ ,  
 Եւ մենք զիտեմք ու կը խաբուիմք . կը յարիմք յայն որ կը թռչի,  
 Եւ կը հրճուիմք անով որ ըզմեզ պիտի հուսկ լացընէ ,  
 Եւ մեր ծիծաղք հողեթեւ բարձրանալով օդահերձ  
 Խոցեալ կ'ընկնին՝ կը խեղդուին յանյագուրդ ծով մեր արտաս-  
 ուաց :  
 Վա՛հ մեր նուագք ընտելացան գերեզմանաց հնչել զափամբք .....  
 Եւ ողբալ զայն՝ որ զուարթութիւն կը թափէր մեր թելոց վե-  
 րայ  
 Իւր նայուածով մեղամաղձիկ և իւր շնորհօք պարկեշտափայլ .  
 Վա՛հ , Արուսեակն ալ շիջաւ ..... գետացէք ո՛վ արտասուք ,  
 Քանդեցէք այդ նոր հողակոյտն որ կը բացուի անոր մարմնոյն ,  
 Եւ անըսփոփ՝ այն հողին վրայ , ինչպէս արտում մեր սրտին  
 վրայ ,  
 Շողիացէք կաթիլ կաթիլ թռչելով հոն՝ ուր հողիներ  
 Մեր սիրելեաց կը թռչին ..... հոն կը փայլի մեր Արուսեակն :

11 Ապրիլ 1884

ՎԵՐՋ ԱՇՈՒՆԻՆ





Յ Ե Տ Ի Ն Ժ Պ Ի Տ Ք

Պ Ա Տ Ճ Ե Ն

Ազնիւ .....

Ծանօթ են ինձ Ձեր քնարին դաշնակը . Մեկտուենէ՛ եղևրերգակ , ունկնդրած եմ յաճախ այն երգերուն որով սովոր է ուղեկցիլ ամէն գեղեցիկ հոգւոյ որ կը մեկնի մի լաւագոյն ախարհի համար : Բայց ձեր քնարն մի և եթ թեւ չունի , միջարտասուօք չթրչեցաւ այն , և մորմոքն չէ միայն որ սխրածախնուազներ կը հանէ անտի : Յայտնի է , սէրն այլ ունեցած է ունի անդ իւր թեւիկն որ թրթռացած է եռանդնաշարժ Ձեր սրտին թելոց զուգարբախ , և արտոյտն որ կ'զմայլի ընդ արշալոյսն , և սոխակն որ կը սիրահարի դարնան՝ զՁեզ ինքեանց համակիր գտին :

Այսօր կ'երգէք զիմ Առաջին տերեսն . թռչուն սիրածայն կը հաճիք պահ մի թափիլ ի նոսա , թըռչտել տերեւէ ի տերեւ փայփայել իւրաքանչիւրն Ձեր փափուկ թեւերով և մի ձայն արձակել , զուարթ կամ տխուր , մէն մի թերթի վերայ , և Ձեր այս դայլայն քանի կը գեղեցկացնէ նոցա համեստ և աղօտ ձայն սօսաւիւնն :

Ձեր նամակն մի քերթուած է , կը պարզէք ի նմա Ձեր հոգւոյն ծալքերն յորս բանաստեղծութեան աշխարհ գանձեր կ'արձածակեալ . մէն մի տողի մէջ կը կարդամ զայդ հոգին , ազնիւ զգայուն , լի գեղեցկին համայն շացումներովն , ակնապիշ տեսլականն . և այդ հոգին կը համակրի ինձ , խնդի սուղ բազմաբառներուս կը կցորդէ բերկրազին արձագանդ մի և հառաչները որ վշտի աղաղակներուս :

Ո՛հ , շնորհակալ եմ Ձեզ որ կուտայք ինձ մի հաճոյք սակաւքիւտ երկրի վերայ ուր կ'երթան մարդիկ խիտ առ խիտ և յաճախ անձանօթք միմեանց , ուր աշխարհ սրտեր կը բարախեն

կը ստոին յետոյ առանց ուրուք ունկնդրած լինելոյ այդ զանխուլ արօփւններուն , և ուր աշխարհ հոգեձայն բարբառք կը նուազին անարձագանդ .....

Կը գտնեմ ի Ձեզ մի սրտի և մտաց մտերիմ , ինչպէս գըտած եմ Ձեր հանձարեւ եղբոր վերայ . կը հասկանամք զիրեար և այս բաւ է . կարեմք ուրեմն յաճախ խոկալ , երազել , սիրել , աղօթել ի միասին , և այս մի երանութիւն է դուն ուրեք տըրուած մարդոյն որ յաճախ ընկերութեան մէջ կ'ապրի իբր յամալուութեան :

Իցիւ , սակայն , արժանի լինէի Ձեր փառաւոր գովեստից զոր այնքան փափուկ կը հիւսէ Ձեր գրիչն . Ձեր ներքողն գեղեցիկ է քան զներբողեալն . Նրաժտութեանս վերայ խօսիլ կ'սկսիք և կը նկարէք Սրշալուսոյ մի պատկերն որ կը ցոլայ վառ ի վառ գոյներով և մտցնելով զառարկայն որ առիթ կուտայ Ձեզ , զայդ տաղերն գրելոյ , կը յափշտակէ միտքն և կը դիւթէ երեւակայութիւնն .....

Եւ եթէ դուք դեռ բողբոջներ կ'սուսէք յինչն , է՞ր մեք չանկնկալեմք Ձեր փունջերուն որոց գեղեցկութիւնն կը նախագգացնեն մեզ այն ծաղկունք զոր ցան աստ անդ սփռած էք , և յորոց մին է Ձեր թուղթն : Ո՛հ , նա պիտի բուրէ միշտ իմ սըրտի վերայ .....

Մնայք բարեաւ , ազնիւ գրագէտ , Ձեր ձեռնն կը սեղմեմ ուժգին և կը մտաուցանեմ Ձեզ խորին սիրոյս և շնորհակալեացս հաւաստին :

1877 նոյ : 10

Ձերդ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Յ. Գ. Ներումն կը խնդրեմ Ձեզ պատասխանել յապաղելոյս համար . պատճառն այն էր որ ուղեցի նամակիս հետ զրկել Ձեզ , որ ընդ երկար մը առաջ կազմարարին քով . պատճառ մի այլ կարեն սեպուել բազմազարդ գործերս որ քիչ ժամանակ կուտան ինձ յիս խորհելոյ :

Ա.ա ..... ՏԻԳՐԱՆ ..... ՍԵԹԵԱՆ

Ռ. Յ. Նոյն



ԱՐՇԱԼՈՅՍՆ ՎՈՍՓՈՐԻ

Հորիզոնը վառ է արեւելից վերայ . մի բոցաշունչ հրդեհ  
 լուսով գիշերայն շառագունած մի հեռաւոր երկնի կը նմանի, ուր  
 երկրային հրկիզութեան թեւերն ակնարկութեամբ կը չափէ մարդ  
 հեռուստ, ուսկից երկին կ'արգահատի երկրի և շառագոյն՝ կ'այր  
 կարծես մարդոյն սրտին հետ ..... դիր և տար ոսկի ամպեր՝ իբրև  
 նաժիշտք որ փութան առագաստէն ելնող հերարձակ դժխոյի  
 գլուխն յարդարելու, կուգան կը ժողովին նորածագ արեւուն  
 վարսագեղ ճառագայթից առջեւ՝ արեւն. միջօրէի թագուհին՝ իշխ  
 լոյս երեսն աշխարհէ ծածկած տակաւին՝ իւր լուսավարսամ ցոյ  
 քերըն կը յղէ ցկեղրոն երկնից՝ աւետարեոք իւր ծագման, և  
 պիտի ծագի հուպ ընդ հուպ . վէտ ի վէտ հաղմավար ալիք՝ ա  
 րեւմտից ծովափանց դիմելով ի համբոյր՝ մարգարտէայ փրփուր  
 ներ կը թափեն ի դարձին՝ արեւուն անդրանիկ ճաճանչներուն  
 վերայ . ծովն երկնի կը սիրահարի, նորա գոյնն կըզգենու, նոր  
 լոյսն կ'ընդգոգէ, և երկին իւր հողմահոս շնչովն նորա սիրտն  
 կ'որորէ՝ կը յուզէ հանդիպական լերինք, ծովեզերեայ պալա  
 տունք, հիւզային երգիք՝ անխտիր կ'ողջունեն տիեզերակեցոյ  
 լոյսն՝ արեւն՝ որ ծագեցաւ, որպէս մի ժպտահոծ հայեցուա  
 կուսին իւր անյոյս տարփաւորին .....

1878

Վ Ե Ր Զ



17126-17129

2013



